

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ
(Աստվածաբանական համալսարան)

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՒՐԿ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գիտական ղեկավար՝
Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մք. Էջմիածին

2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
ՆԱԽԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ Ա. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
Ա.1. Ինչո՞ր անուամբ գրքի թարգմանվեց անուշիկը	10
Ա.2. Ո՞ր լեզվի է ԿԱՏԱՐՎԵԼ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ	12
Ա.3. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՆՈՆԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄԸ	18
ԳԼՈՒԽ Բ. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	20
Բ.1. ՊԱՐՏԱՎԻ ԺՈՂՈՎԸ	20
Բ.2. ԿԱՆՈՆԱԿԱՆ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	23
Բ.3. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆԸ	35
ԳԼՈՒԽ Գ. ԿԱՆՈՆԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ	39
Գ.1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ	39
Գ.2. ԱՍՈՐԱԿԱՆ ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԸ	40
Գ.3. ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԸ	44
Գ.4. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵԹՈՎՊԱԿԱՆ ԿԱՆՈՆԸ	48
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	52
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	53
ՀԱՎԵԼՎԱԾ.....	58
Ա. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ	58
Բ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ	61

ՆԱԽԱԲԱՆ

Աստվածաշունչը մարդկային քաղաքակրթության բացառիկ մատյանն է: Այն բովանդակում է պատմություն, գրականություն, բանաստեղծություն (չափածո և արձակ), մարդկային փորձառության վրա հիմնված իմաստուն խոսքեր և ի վերջո՝ Փրկչի հավիտենական արժեք ներկայացնող պատգամները: Իզուր չէ, որ Աստվածաշունչը կոչվել է «գրքերի գիրք»: Դարերի ընթացքում մեծ է եղել Աստվածաշնչի ազդեցությունը մարդկային քաղաքակրթության, մշակույթի, արվեստների և գրականության վրա: Նախ և առաջ պետք է գիտակցել, որ Աստվածաշունչն ինքնին գիրք է, ավելի ճիշտ՝ գրքերի ժողովածու: Հենց այս գրքերն են, որ կազմել են հիմքը եկեղեցու աստվածաբանության և մարդկանց հավատի: Սակայն այս գրքերի քանակը, դասավորվածությունը տարբեր եկեղեցիներում տարբեր է: Դրանց դասավորությունն այլ կերպ կոչվում է սուրբգրային կանոն:

Հայ Առաքելական եկեղեցին կանոնի հարցում ընդունված է ասել, որ հետևում է հունական կանոնին, բայց իրականում այդ սահմանները այնքան էլ հստակեցված չեն: Մեր նպատակն է նոր լույսի տակ հակիրճ կերպով քննել Աստվածաշնչի հայկական կանոնը՝ իր ողջ պատմությամբ. սկսելով Սուրբ Գրքի հայերեն առաջին թարգմանությունից և ավարտելով Աստվածաշնչի վերջին հրատարակությամբ: Թեման բաժանել ենք երկու մասի, հայկական կանոնին զուգահեռ ուսումնասիրելով նաև քույր եկեղեցիների կանոնները, որոնք իրարից մեծապես ազդվել են:

Հայակական կանոնը երբեք ամբողջական և համակողմանի քննության չի ենթարկվել: Որոշ հեղինակներ (Տեր-Մովսիսյան Մ.¹, Անասյան Հ.², Մեքուլայ Օ.³, Աճեմյան Շ. արք.⁴, Ներսեսյան Ն. ավ. քին.⁵, Ազնավորյան Զ. արք.⁶, Աբրահամյան Ա. սրկ.⁷) զբաղվել են կանոնի քննությամբ, սակայն դրանցից որոշները միայն ակնարկի

¹ Тер-Мовсесян Месроп, История перевода Библии на армянский язык.

² Անասյան Հակոբ, Աստվածաշունչ մատյան. Հայկական բնագիր:

³ Մեքուլայ Օ., Նոր Կտակարանի գրքերու կարգը հայոց քով:

⁴ Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը:

⁵ Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և Հայ մշակույթը:

⁶ Ազնավորյան Զարեհ արք., Աստվածաշունչին վերաբերյալ ուսումնասիրություններ:

⁷ Աբրահամյան Արման սրկ., Հին Կտակարանի կանոնը Հայ Եկեղեցու ավանդության մեջ:

քննությունն, այլ միայն մի (հինկտակարանյան կամ նորկտակարանյան) դիտակետից են քննել կանոնը և ոչ ոք սուրբգրային կանոնի ամբողջական քննություն չի կատարել:

Մեր նպատակն է՝ հենվելով արդեն արված աշխատանքի վրա, անել նոր՝ ամբողջական քննություն: Սկսելու ենք սկզբնաղբյուրներից՝ փորձելով նորովի մեկնաբանել թարգմանության և կանոնի կապը, քննել մինչ այս արված եզրակացությունների ճշմարտացիությունը, ներկայացնել կանոնի ուսումնասիրության արդի նվաճումները: Սա փորձ է գիտական հետազոտության, որտեղ քննելու ենք Աստվածաշնչի կանոնի զարգացումը՝ սկսելով Ե դարից և հասցնելով ԻԱ դար: Այս ամենը անելու ենք նաև համեմատելով քույր եկեղեցիների՝ ի մասնավորի ասորական կանոնին: Ասորական եկեղեցու կանոնի ուսումնասիրումը մեզ մղեց ուսումնասիրելու նաև մյուս քույր եկեղեցիների կանոնները և բացահայտելու դրանցում առկա բոլոր նմանությունները: Սա հայ իրականության մեջ առաջին անդրադարձն է քույր եկեղեցիների կանոններին:

Ուսումնասիրությունը կատարելիս մեր առաջ նպատակ ենք դրել.

- Վեր հանել հայական կանոնի մասին առկա բոլոր հիշատակությունները Ե դարի պատմիչ-հեղինակներից:
- Քննել հայ իրականության մեջ առկա բոլոր ամբողջական կանոնները և պարզել դրանց կանոնականության սահմանները:
- Ուսումնասիրել քույր եկեղեցիների կանոնները, քննել դրանց նմանություններն ու միմյանց վրա ունեցած ազդեցությունները:

Ուսումնասիրությունը կատարելիս հիմնվել ենք Ե դարի սկզբնաղբյուրների վրա (Կորյուն, Փարպեցի, Խորենացի), հրատարկված Աստվածաշնչերի բնագրերի վրա, ինչպես նաև օգտագործել ենք վերևում արդեն իսկ հիշատակված աշխատանքները: Իսկ քույր եկեղեցիների պարագայում օգտագործել ենք գրեթե ամբողջությամբ օտարալեզու աղբյուրներ, քանի որ նյութը հայերենով ուսումնասիրված չէ:

Ավարտական աշխատանքի շարադրանքը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, վերջաբանից և հավելվածից:

Առաջին գլուխը՝ «Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը» բաղկացած է երեք ենթագլուխներից.

Առաջին ենթագլխում՝ «Ինչո՞ւ Առակաց գիրքը թարգմանվեց առաջինը» քննում ենք Առակաց գրքի առաջինը թարգմանվելու պատճառներն ու նպատակները:

Երկրորդ ենթագլխում՝ «Ո՞ր լեզվից է կատարվել Սուրբ Գրքի թարգմանությունը» փորձում ենք մանրամասնորեն անդրադառնալ թարգմանության լեզվի կարևորությանը:

Երրորդ ենթագլխում՝ «Սուրբ Գրքի թարգմանությունն ու կանոնի ընդօրինակումը» ցույց ենք տալիս Սուրբգրային թարգմանության անմիջական կապը կանոնին, թե ինչպես է տեքստի թարգմանությունը վերածվում կանոնի ընդօրինակության:

Երկրորդ գլուխը՝ «Սուրբ Գրքի հայկական կանոնի պատմական զարգացումը» բաժանել ենք երեք ենթագլուխների՝ նյութը լավագույնս ըստ շրջանների ներկայացնելու նպատակով.

Առաջին ենթագլուխը՝ «Պարտավի ժողովը» անդրադարձ է հայակական կանոնին առնչվող միակ ժողովական որոշմանը:

Երկրորդ ենթագլուխը՝ «Կանոնական ցանկերը հայ իրականության մեջ» ներկայացնում է հայ հեղինակների կողմից հիշատակված սուրբգրային կանոնի ամբողջական ցանկերը:

Երրորդ ենթագլուխը՝ «Աստվածաշնչի հրատարակություններն ու կանոնը» անդրադարձ է Սուրբ Գրքի առաջին հրատարակությունից մինչև օրս եղած հրատարակություններին և դրանցում առկա կանոններին:

Երրորդ գլուխը՝ «Կանոնը քույր եկեղեցիներում» ներկայացրել ենք չորս ենթագլուխների միջոցով.

Առաջին ենթագլուխը՝ «Արևելյան ուղղափառ եկեղեցիներ» ներածական անդրադարձ է Արևելյան ուղղափառ եկեղեցիներին:

Երկրորդ ենթագլուխը՝ «Ասորական սուրբգրային կանոնը» ասորական եկեղեցու կանոնի պատմությունն է:

Երրորդ ենթագլուխը՝ «Ղպտի եկեղեցու կանոնը» անդրադարձ է դպտական սուրբգրային կանոնին:

Չորրորդ ենթագլուխը՝ «Աստվածաշնչի եթովպական կանոնը» ներկայացնում է Եթովպական եկեղեցու յուրատեսակ կանոնը:

Հավելվածը ներառում է համեմատական կանոնական ցանկեր:

ԳԼՈՒԽ Ա.
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բազմադարյա հարուստ պատմություն և մշակույթ ունեցող հայ ժողովուրդը պատմական նոր փուլ սկսեց Դ դարում: Դարասկզբին քրիստոնեությունը հռչակելով պետական կրոն հայերը սկսեցին նոր շրջան՝ վերածննդի: Բայց պետք է ընդունել, որ ամեն ինչ շատ հարթ չընթացավ. դժվար էր հեթանոսությունից անցումը քրիստոնեության: Իրավիճակը ավելի ծանրացավ հատկապես 387 թվականին՝ Հայաստանի առաջին բաժանումով: Բայց նույն այս դարում ծնվեց հայոց երրորդ լուսավորիչը՝ Մեսրոպ Մաշտոցը⁸: Մաշտոցի կյանքի մանրամասնությունների մեջ չխորանալով՝ հարկ ենք համարում հատկապես նոր լույսի տակ քննարկելու նրա հոգևոր գործունեությունը: Միայն նշենք, որ կրթվել է «հելլենական դպրութեամբ»⁹: Մեկ այլ վկայության համաձայն, Մաշտոցը մեկնել է Ասորիքի Անտիոք քաղաքը, որտեղ սովորել է հունարեն ու ասորերեն լեզուները և այլ գիտություններ¹⁰: Զինվորական գործը թողնելով նա մեկնում է Գողթն գավառ¹¹, որը հայտնի էր մոլի հեթանոսությամբ, հոգևոր քարոզչության՝ իր հետ վերցնելով նաև իր աշակերտներին: Այստեղ է, որ Մաշտոցը բախվում է իր համար մեծագույն խնդրին. հայ ժողովուրդը անհաղորդ էր նոր կրոնին¹²: Նա նաև հստակ գիտակցում է, որ Արևելյան Հայաստանում գտնվելով պարսկական ազդեցության տակ՝ հայերը ենթակա էին պարսկական, իսկ արևմուտքում՝ հունական հզոր ազդեցությանը: Կար ազգային ինքնության պահպանման խնդիր, որովհետև անգամ արքան էր ենթակա Պարսկաստանին: Կրոնական կյանքը չէր զիջում աշխարհիկին իր տկարությամբ. ժամերգությունները կատարվում էին ասորերեն ու հունարեն, որից ժողովուրդը ոչինչ չէր հասկանում և հետևաբար մնում էր հեթանոսական հավատալիքների ոլորտում¹³: Քահանաներն էլ ազգությամբ կա՛մ հույն էին, կա՛մ ասորի, որոնցից վերջինները

⁸ Տե՛ս Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց. հայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը, Երևան, 1962, էջ 10-14 (այսուհետ՝ Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց):

⁹ Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 36 (այսուհետ՝ Կորյուն, Վարք Մաշտոցի):

¹⁰ Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 2006, էջ 71:

¹¹ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց Գրերը, Երևան, 1984, էջ 86-88 (այսուհետ՝ Աճառյան Հ., Հայոց գրերը):

¹² Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց, էջ 20:

¹³ Նույն տեղում էջ 21:

պարսկական քարոզիչներ էին, իսկ առաջինները՝ բյուզանդական: Հրամայական էր նաև հայ ժողովրդին հայեցի կրթելը: Այստեղ է, որ լուսավորվում է Մաշտոցի միտքը, և նա հասկանում է, որ բոլոր հարցերը կարելի է լուծել հայկական գրերի միջոցով: Խնդիրը հստակ էր, ելքը առավել ևս, մնում էր գտնել ելք տանող դուռը: Մաշտոցը դիմում է կաթողիկոսին: Վերջինս էլ իր հերթին՝ արքային: Արքան համաձայնում է, և Մաշտոցը անցնում է գործի: Արքայի հրամանով Հայաստան են բերվում Դանիել Ասորու մոտ պահպանված հայկական նշանագրեր¹⁴, որոնց հիման վրա Մաշտոցը դպրոց է բացում և երկու տարի դասավանդում: Բայց ուսուցումը ցույց է տալիս, որ այս տառերը ամբողջովին չեն համապատասխանում հայերեն լեզվամտածողությանը¹⁵, ուստի Մաշտոցը որոշում է ինքնուրույն հայկական լիարժեք գրեր ստեղծել: Պետք է ենթադրել, որ այս ընթացքում Մաշտոցն ուսումնասիրել է ժամանակի տարբեր այբուբեններ (ասորական, հունական, արամեական, պարսկական ևն)¹⁶, ինչից հետո էլ իր համար վերջնականապես պարզել հայերեն հնչյունական համակարգը, որը ոչ մի կերպ չէր համընկնում 24-26 տառ ունեցող մյուս լեզուների համակարգերին: Այս նպատակով, Մաշտոցն իր աշակերտների հետ գնում է Եդեսիա, այնուհետև Սամոսատ¹⁷, որտեղ էլ կատարվում է գրերի գյուտը: Ամբողջապես ինքնուրույն հայ գրերի գյուտից հետո Մաշտոցի գործը եղավ թարգմանական գործունեություն ծավալելը: Գրերի գյուտը ազգային ինքնագիտակցության հասունության վկայականն էր¹⁸: Այն ժամանակ ինչպես Մաշտոցի, այնպես էլ կաթողիկոսի բուն նպատակը ժողովրդի հոգևոր և կրոնական կրթությունն էր:

Կարծում ենք, որ գրերի գյուտն, ամենից առաջ, նպատակ ուներ ստեղծելու քրիստոնեական գրականություն հայերենով¹⁹, ինչի համար էլ ամենից առաջ ձեռնարկվում է Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը²⁰: Սամոսատում անմիջապես գրերի գյուտից հետո, ըստ Կորյունի վկայության, Մեսրոպը սկսում է Սուրբ Գրքի

¹⁴ Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաջյան Ա., Հայոց Լեզվի պատմություն, ԵՊՀ, Երևան, 2017, էջ 45:

¹⁵ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց պատմություն (Հյուսված ընդհանուր պատմության հետ), ԵՊՀ, Երևան, 2004, էջ 124-125:

¹⁶ Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց, էջ 25:

¹⁷ Տե՛ս Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, երկրորդ հավելված, էջ 575-588:

¹⁸ Արևշատյան Ս., Մեսրոպ Մաշտոցի հոգևոր սխրանքը, Հայոց Գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2006, էջ 11:

¹⁹ Մանանդյան Հ., Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մասն Ա, Երևան, 1960, էջ 246:

²⁰ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց Գրերը, էջ 232:

թարգմանությունը. «...ի թարգմանությունն դառնայր հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհանն անուն կոչէին՝ յԵկեղեաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եդեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի...»²¹:

²¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 50:

Ա.1. ԻՆՉՈ՞Ւ ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԸ ԹԱՐԳՄԱՆՎԵՑ ԱՌԱՋԻՆԸ

Մեսրոպ Մաշտոցը առաջինը հայերենի վերածեց Սողոմոնի Առակաց գիրքը: Կարող է տրամաբանական հարց առաջանալ, թե ինչն²²: Այս հարցին յուրովի, բայց իրար չհակասող տարբերակներ են առաջարկել Աստվածաշունչը ուսումնասիրող հայ հեղինակները: Ըստ Աճառյանի, Սուրբ Գրքից Մաշտոցի սիրած հատորն էր Առակաց գիրքը²²: Կարծում ենք՝ այս վարկածը այնքան էլ համոզիչ չէ: Ֆրեդերիկ Կոնիբերի կարծիքով, Սբ. Մեսրոպի ձեռքին եղել է Աստվածաշնչի երկհատորյակ, որից երկրորդը, որը պարունակել է նաև Նոր Կտակարանը, սկսվել է Առակաց գրքով²³: Այս կարծիքին անդրադառնալով կարելի է ասել, որ այն բավարար հիմնավորված չէ, ուստի մնում է միայն կարծիք լինելու սահմանում: Թերևս հետաքրքրական և տրամաբանական է Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի կարծիքը. «ավելի ճիշտ չի²⁴ լինի ենթադրել, որ արդեն գոյություն ունեւ Սաղմոսաց գրքի թարգմանությունը, և Մեսրոպը, իմանալով այդ մասին, ձեռնարկեց Սաղմոսներին հաջորդող գրքի թարգմանությունը»²⁴: Հայտնի է, որ քրիստոնեական եկեղեցու ծիսակարգում իր ուրույն տեղն ունի Դավթի Սաղմոսների գիրքը, որը մանավանդ նախնական քրիստոնեական շրջանում ծիսակարգերի հիմքն էր կազմում: Ուստի ենթադրելի է, որ Սաղմոսաց գիրքը ինչ-որ տարբերակով կարող էր թարգմանված լինել: Մենք զարգացնելով Մեսրոպ արքեպիսկոպոսի կարծիքը և հենվելով Կորյունի այն վկայության վրա, թե երկու տարի դանիելյան նշանագրերով Մաշտոցը ուսուցանել է²⁵, ենթադրում ենք, որ հենց այս շրջանում և հենց դանիելյան նշանագրերով կարող էր կատարվել Սաղմոսաց գրքի հայերեն թարգմանությունը, որը մեծագույն նշանակություն ուներ հայերեն ծիսակատարելու համար: Հարցին անդրադառնալով սպառնիչ և հիմնավոր պատասխան է տալիս Ղանալայանը. «Մաշտոցի կարծիքով վերջինս (Առակաց գիրքը) թե՛ իր բազմազան ու հետաքրքրական բովանդակությամբ և թե՛ պարզ լեզվով ու ոճով հարազատ ու հասկանալի պիտի լիներ կրթության ծարավ հայ մանուկներին՝ դառնալով նրանց համար յուրահատուկ լավ

²² Աճառյան Հ., Հայոց Գրերը, էջ 232:

²³ St' u Conybeare F., Armenian Version of The Old Testament, The Armenian Church Heritage and Identity, New York City, 2001, p. 119-120:

²⁴ Тер-Мовсесян Месроп, История перевода Библии на армянский язык, Санкт-Петербург, 1902 г., стр. 21 (այսուհետ՝ Тер-Мовсесян Месроп, История перевода Библии):

²⁵ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 44:

նախաշավիղ-ընթացարան»²⁶: Կասկածից վեր է, որ Մաշտոցի նպատակը դպրոցներ հիմնելն էր, և ստացվում է՝ Սուրբ Գրքի թարգմանությամբ նա երկու հարց է լուծում. նախ քարոզչական, որով պիտի քարոզվեր Աստծո խոսքը և հետո նաև կրթական, որովհետև Առակաց գիրքը կարող էր դառնալ յուրատեսակ ձեռնարկ-դասագիրք Բարոյականության և իմաստության: Առակաց գիրքն էլ աչքի է ընկնում իր բազմաշերտությամբ. այն քարոզ ունի երիտասարդներին, հորդոր՝ ծերերին և կարող է միաժամանակ հետաքրքրել հասարակության տարբեր շերտերի մարդկանց: Պատահական չէ, որ հենց առաջին նախադասությունը Առակաց գրքի հետևյալն է. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...» (Առակ. 1:1): Մա կոչ է իմաստուն դառնալու և կրթվելու, կոչ, որը Մաշտոցը թարգմանելով ուղղել է հայ ժողովրդին: Ի դեպ հիշատակելի է նաև այն հանգամանքը, որ առկա կրոնական մյուս գրքերը ունեին հիմնականում կրոնա-բարոյախոսական բնույթ ու բովանդակություն, իսկ Առակաց գիրքը աչքի էր ընկնում իր ավելի աշխարհիկ ոգով, իր խրատա-դաստիարակչական բովանդակությամբ և, որ ամենակարևորն է, ժողովրդին հարազատ առակ-ասացվածքային լեզվով:

Ամփոփելով այս ամենը, կարող ենք վստահաբար ասել, որ պատահական չէր ամենակգբում Առակաց գրքի թարգմանությունը: Ի դեպ կարելի է համադրական մոտեցմամբ ասել, որ գուցե իրոք արդեն եղել է Մաղմուսաց գրքի թարգմանությունը, և Մաշտոցը իմանալով դրա մասին, առավել գործածելի Նոր Կտակարանի թարգմանությունից առաջ գերադասեց անել Առակների թարգմանությունը՝ վերոնշյալ հիմնավոր հանգամանքների ազդեցությամբ:

²⁶ Ղանալայան Ա., Թե ինչո՞ւ Մաշտոցը թարգմանեց Սողոմոնի առակները, Բանբեր Մատենադարանի, № 7, Երևան, 1964, էջ 115:

Ա.2. Ո՞Ր ԼԵԶՎԻՑ Է ԿԱՏԱՐՎԵԼ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԹԱՐԳԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս մասին խոսելիս կարող ենք երկու տարբեր հարցեր առաջ քաշել. նախ, թե ո՞ր լեզվից է կատարվել Առակաց գրքի թարգմանությունը, ապա նաև ամբողջ Սուրբ Գիրքը: Առաջին հարցին տրամաբանական եզրահանգմամբ հստակորեն կարելի է պատասխանել: Մաշտոցը լինելով Ասորիքում՝ կատարել է Առակաց գրքի թարգմանությունը միանշանակ ասորերենից²⁷: Ավելի բարդ է հարցի երկրորդ մասին անդրադառնալը: Նախ պիտի ասենք, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը ընթացել է երկու փուլով. դրանցից առաջինը պատկանում է հայ գրերի գյուտից (405/406 թ.)²⁸ մինչև Եփեսոսի տիեզերական ժողովն (431թ.) ընկած շրջանին, իսկ երկրորդը, որը նախորդի վերանայումն ու սրբագրումն էր Բյուզանդիոնից ձեռք բերված հունարեն բնագրերի հետևողությամբ, պատկանում է Եփեսոսի ժողովին անմիջականորեն հաջորդող տարիներին²⁹: Երկրորդ՝ ընկալյալ թարգմանության հունարենից կատարված լինելը անհերքելի իրականություն է, ինչի ապացույցն այն է, որ հայերենը ընկալյալ բնագիրը ըստ ամենայնի համապատասխանում է հունական բնագրին: Մնում է պարզել, թե առաջին, նախաեփեսոսյան՝ Փութանակի³⁰ թարգմանությունը ո՞ր լեզվից էր կատարված: Այս մասին Աճառյանը կարճ ասում է, թե Աստվածաշունչն էլ սկզբում ասորերենից թարգմանվեց, բայց շուտով Պոլսից ստանալով հունարեն մի ընտիր օրինակ, Սահակ կաթողիկոսն իր աշակերտների հետ երկրորդ անգամ թարգմանեց նույնը հունարենի վրայից, որից հետո ասորերեն թարգմանությունը ջնջվեց³¹: Ասվածը բավարար հիմնավորված չհամարելով, կարիքն ունենք սկզբնաղբյուրների օգնությամբ գտնելու պատասխանը:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության հանգամանքների մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Ե դարի պատմիչներ Կորյունը, Խորենացին և

²⁷ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, ԵՊՀ, Երևան, 2013, էջ 343:

²⁸ Տե՛ս Տեր-Մինասյան Երվ., Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին, Բանբեր Մատենադարանի, № 7, Երևան, 1964, էջ 25-48:

²⁹ Անասյան Հ., Աստվածաշունչ մատյան. Հայկական բնագիր, Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ., հատոր Բ, Երևան, 1976, էջ 311 (այսուհետ՝ Անասյան, Աստվածաշունչ մատյան):

³⁰ Տե՛ս Ազնավուրյան Զարեհ արք., Աստվածաշունչին վերաբերյալ ուսումնասիրություններ, խմբագրությամբ Վաղինակ վրդ. Մելոյանի, Անթիլաս, 2007, էջ 144-146:

³¹ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, ԵՊՀ, Երևան, 2013, էջ 9:

Փարպեցին: Կա երկու կարծիք, որ այն կա՛մ թարգմանվել է ասորերենից, կա՛մ՝ հունարենից:

Հունարենի մասին խոսելիս, պիտի ասենք, որ այս վարկածի հիմքը Փարպեցու Պատմության մեջ առկա վկայություններն են: Այդ վկայություններից մեկում Փարպեցին գրում է, թե Մաշտոցը «հանդիպեցուցանէր զհայերէն արթութայսն ըստ կարգման սիլովաբյիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զարթութայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին»³²: Սակայն համադրելով այս վկայությունը այլ վկայությունների հետ անպայմանորեն հակասություն պիտի տեսնենք, քանի որ Մաշտոցի վաղ տարիների մասին խոսելիս նա նշում է, որ «ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ գղարութիւն յոյն»³³: Ուրիշ տեղ էլ Փարպեցին խոսելով հայալեզու Սուրբ Գրքի կարևորության մասին՝ ասում է, որ Մաշտոցը և իր գործակիցները չէին համարձակվում սկսել այդ ծանր գործը, քանզի «ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգից յունարէն ուսմանն»³⁴: Ստացվում է՝ մանուկ ժամանակ հմտանալով հունարենի մեջ, գրերի գյուտից հետո Մաշտոցը դժվարանում է դասավորել տառերը ըստ հունարենի և դիմում Սահակ կաթողիկոսի օգնությանը, որը հունարենի գիտակ էր, ինչպես նաև չի համարձակվում սկսել Սուրբ Գրքի թարգմանությունը հունարենին լավ տեղյակ չլինելու պատճառով: Այստեղ միակ լուծումը կարելի է գտնել հենվելով Փարպեցու ուրիշ վկայության վրա, երբ թվարկելով Մաշտոցի գործակիցներին ասում է. «էին առ սակաւ մի որպէս երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեգենայիսն»³⁵, այսինքն՝ Մաշտոցը, ինչպես և իր գործակիցները, մի քիչ գիտեին հունարեն, և նրանց մոտ ստացվում էր միայն վանկ-վանկ ընթերցելը: Ի վերջո, քահանաների և արքայի խնդրանքներից հետո, Սահակ կաթողիկոսը ստանձնում է Սուրբ Գրքի թարգմանությունը. «թարգմանեաց զկտակարանս ամենայն, զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք Սուրբ Հոգւոյն, եւ հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն գնորոց կտակարանացն զլուսաւոր և զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգւով»³⁶: Այստեղ, եթե

³² «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց», քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 34 (այսուհետ՝ Փարպեցի, Պատմություն):

³³ Փարպեցի, Պատմություն, էջ 28:

³⁴ Նույն տեղում, էջ 36:

³⁵ Նույն տեղում, էջ 34:

³⁶ Նույն տեղում, էջ 38:

առանձաբար անդրադառնանք հեղինակի նշված կետերին, կտեսնենք բոլոր կտակարանները, Մարգարեների խոսքերը, Նոր Կտակարանը: Դժվար է ասել՝ գործ ունենք կրկնաբանությամբ՝ հետ, երբ նշվում է բոլոր կտակարանները, այնուհետև առանձնաբար Նոր Կտակարանը, թե՞ առանձին պատճառ կա վերստին հիշատակության: Չնայած Փարպեցու վկայությունից դժվար է կռահել, թե կոնկրետ որ գրքերն են թարգմանվել, բայցևայնպես կարելի է նկատել, որ թարգմանվել է ողջ Սուրբ Գիրքը՝ Հին և Նոր Կտակարաններով, և որ ամենակարևորն է՝ հունարենից:

Հակառակ կարծիքն ունի Խորենացին, որը հենվելով Կորյունի երկու տարբեր վկայությունների վրա (որոնց կանդրադառնանք ստորև), և դրանք իրար միացնելով եզրակացնում է, թե հենց Սամոսատում, որտեղ սկսվել էր թարգմանությունը Առակաց գրքի, այնտեղ էլ ավարտել է Մաշտոցը Աստվածաշնչի թարգմանությունը. «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան եւ զերկու յայտնիսն և զՆոր Կտակա...»³⁷: Այստեղ Խորենացին օգտագործում է հայտնի բառը 22 գրքերի մասին, որոնք ներկայցնում էին Հին Կտակարանի եբրայական կանոնը, որը ընդունելի և գործածելի էր նաև Պեշիթոյում՝ իբրև ասորական կանոն: Առավել հետաքրքրական է այն հանգամանքը, որ հայ իրականության մեջ արդեն կար կանոնականության մասին պատկերացում, ինչը արտահայտվել է հայտնի և գաղտնի տերմինների օգտագործմամբ³⁸: Ստացվում է, որ ըստ Խորենացու վկայության, Սուրբ Գրքի Փութանակի թարգմանությունը կատարվել է ասորերենից՝ վերջինիս կանոնի ընդօրինակությամբ:

Սուրբ Գրքի թարգմանության մասին խոսելով Կորյունը ասում է. «Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զԳիրս՝ նախ յԱռակացն Սողոմոնի...»³⁹, ապա «երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր յորում յանկարծ ուրեմն օրէնուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, եւ յառաջադէմն Պօղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի...»⁴⁰: Հենց Կորյունի վկայությունից

³⁷ «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 404 (այսուհետ՝ Խորենացի, Հայոց Պատմություն):

³⁸ Տե՛ս Անասյան Հ., Անանուն կամ անվավեր գրքեր, Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ., հատոր Ա, Երևան, 1959, էջ 898-910:

³⁹ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 50:

⁴⁰ Նույն տեղում, էջ 56:

ենք իմանում, որ Սուրբ Գրքի թարգմանությունը սկսվել է Առակաց գրքից, որից հետո գալով Հայաստան և գործակից ունենալով Սբ. Սահակ հայրապետին, Սբ. Մեսրոպ Մաշտոցը թարգմանել է օրենուսույց Մովսեսին՝ մարգարեական դասով, որտեղ Մովսես ասելով հավանաբար նկատի ունի Հնգամատյանը, իսկ մարգարեական դաս ասելով՝ մյուս մարգարեներին, որից հետո Պողոսը ամբողջ առաքելական գնդով, համապատասխանաբար՝ Պողոսի և ընդհանրական նամակների մասին է խոսքը, և իհարկե չէին կարող անտեսվել Ավետարանները: Կորյունի ոչ անվանական հիշատակությունից, կարելի է ասել, որ թարգմանվել է ողջ Սուրբ Գիրքը, բայց թե ո՞ր լեզվից, այս մասին հեղինակը լռում է:

Ստացվում է ունենք երեք վկայություն, որոնցից մեկը պահպանում է չեզոքություն՝ չանդրադառնալով թարգմանության լեզվին, իսկ մյուս երկուսը առաջ են բերում իրար հակասող տեսակետներ: Իսկ ո՞ւմ վկայությունն է առավել արժանահավատ: Այս հարցին որոշակի պատասխան տալու համար կարծում ենք պիտի թարգմանությունը դիտարկենք իր ժամանակային համատեքստում՝ հասկանալով, թե տվյալ ժամանակաշրջանում՝ մինչև գրերի գյուտ, ո՞ր լեզուն էր գործածելի Հայաստանում, և մասնավորապես ծեսում, ապա բխեցնել, թե ո՞րից պիտի թարգմանություն կատարեին:

Առաջին հարցին անդրադառնալով պիտի բերենք երկու՝ առաջին հայացքից իրար հակասող կարծիքներ: Ըստ Փարպեցու «պաշտօն եկեղեցւոյ եւ կարդացմունք Գրոց ասորի ուսմամբ վարեին ի վանորայս եւ յեկեղեցիս հայաստան ժողովրդոցս»⁴¹: Իսկ ըստ Խորենացու՝ «յայնժամ գիր դպրութեան Հայոց չեւ եւս էր լեալ, եւ յունական վարեին եկեղեցւոյ կարգք»⁴²: Սակայն այս թվացյալ հակասությունը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ Խորենացու ասածը վերաբերում է 387թ.-ից առաջ տիրող իրավիճակին, իսկ Փարպեցունը՝ հակառակը: Մի այլ տեղ Խորենացին նշում է, որ բաժանումից հետո Արևելյան Հայաստանում հունարենի փոխարեն պարտադրվել է ասորերենի գործածությունը. «ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ումեք ուսանել դպրութեան յիրեանց մասին, այլ միայն ասորի»⁴³, մինչդեռ Բյուզանդական Հայաստանում շարունակվել է հունարենի գործածությունը. «ի

⁴¹ Փարպեցի, Պատմություն, էջ 30:

⁴² Խորենացի, Հայոց Պատմություն, էջ 366:

⁴³ Նույն տեղում, էջ 406, 408:

Յունաց մասին... ընդ ձեռնադրութեան տուգանեցան, վիճակեալք յաթոռն Կեսարու, վարել յունական դպրութեամբ եւ ոչ ասորով»⁴⁴: Հունարենի նկատմամբ հալածանքը, ըստ Խորենացու, սկսվել է դեռ Դ դարի 70-ական թվականներից՝ Մերուժան Արծրունու բռնությունների ժամանակ. «Եւ գորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, եւ հրաման տայր մի ուսանել զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ, եւ մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել»⁴⁵: Այսպիսով, ըստ Խորենացու, մինչև Հայաստանի բաժանումը Հայոց եկեղեցու ծիսական լեզուն եղել է հունարենը, իսկ դրանից հետո ասորերենը⁴⁶: Ստացվում է ն՝ Փարպեցու, ն՝ Խորենացու վկայությամբ, Հայաստանում Մաշտոցի գործունեության ժամանակաշրջանում արևելյան Հայաստանում կիրառվող լեզուն ասորերենն էր: Մեսրոպը հմուտ էր ասորերենի մեջ, և իր թարգմանական ողջ աշխատանքը կատարել էր ասորական մշակույթի կենտրոններում՝ Եդեսիա, Սամոսատ, որտեղ էլ ի վերջո թարգմանեց Առակացը: Առկա բոլոր ապացույցների հիմամբ կարող ենք պնդել, որ Սուրբ Գիրքը ևս պիտի թարգմանվեր ասորերենից, և չպիտի մոռանանք, որ Արևելյան Հայաստանում հունարենը արգելված էր: Ասորերեն թարգմանությունը ենթադրում էր ասորական կանոնի ընդօրինակում, ինչի մասին Խորենացին վկայում էր: Բայց սրան հակասող վկայություն է Կորյունից մեջբերվող հատվածը. «Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ իմաստութիւնն»⁴⁷: Թվում էր ամեն ինչ պարզ է, որ պիտի թարգմանությունը լիներ ասորերենից, բայց Կորյունի վկայությունը, թե Սահակը հունարենից թարգմանեց, ծնում է նոր հարցականներ: Մենք միտված ենք վերոբերյալ վկայությունը մեկնաբանել իբրև կրկնակ թարգմանության ապացույց: Ժամանակի ընթացքում Աստվածաշնչի բնագրով զբաղվող հեղինակները համադրելով հնագույն ձեռագրերը հասկացան, որ հաճախ դրանք չեն համընկնում և գիտության մեջ առաջ եկավ այն տեսակետը, թե Աստվածաշնչյան որոշ գրքեր (Ժողովող, Երգ երգոց, Մնացորդաց Ա, Բ, Սիրաք) ունեն կրկնակի թարգմանություններ⁴⁸, այսինքն՝

⁴⁴ Նույն տեղում, էջ 406:

⁴⁵ Նույն տեղում, էջ 366:

⁴⁶ Տեր-Պետրոսյան Լ., Հայ թարգմանական գրականության ընդհանուր բնութագիրը, Գիրք Ծննդոց (քննական բնագիր), աշխատասիրությամբ Զեյթունյանի, Երևան, 1985, էջ 44 (այսուհետ՝ Գիրք Ծննդոց, Ներածություն), հմմտ. Հացունի Վ., Աստվածաշունչն ու Հայաստան, Բազմավեպ, 1935, էջ 317:

⁴⁷ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 76:

⁴⁸ Տե՛ս Անասյան, Աստվածաշունչ մատյան, էջ 318-340:

որոշ գրքեր թարգմանվել են հունարենից, որոշներն էլ՝ ասորերենից: Ենթադրելի է, որ սկզբնական թարգմանությունը կատարվել է Մաշտոցի կողմից՝ ըստ անհրաժեշտության ծեսում կիրառելի գրքերի թարգմանությամբ և ասորերենից: Ասվածի ապացույցն է այն, որ բնագրային համեմատությամբ Սաղմոսաց գիրքը և Ավետարանները համընկնում են ասորական օրինակներին, ուստի ի սկզբանե թարգմանված են եղել ասորերենից: Իսկ Մահակ հայրապետը լինելով հունարենի գիտակ՝ իր մոտ եղած հունարեն օրինակից թարգմանել է Մաշտոցի կողմից անտեսված կամ թերի թարգմանված գրքերը:

Թերևս կարելի էր Ե դարում տարբերակել թարգմանական երկու դպրոց՝ ասորական և հունական, ինչպես վարվում է Ակիմյանը⁴⁹, սակայն պատմագիրների կողմից հաստատված այն փաստը, որ միևնույն հեղինակները թարգմանություններ են կատարել և՛ հունարենից, և՛ ասորերենից, ավելորդ է դարձնում նման հարցադրումը: Անհերքելի են իհարկե ռճական տարբերությունները այս թարգմանությունների, ինչը բացատրվում է ոչ թե տարբեր թարգմանական դպրոցների առկայությամբ, այլ այդ լեզուների որոշակի առանձնահատկություններով⁵⁰: Էական է այն, որ դասական շրջանի գլխավոր թարգմանչական սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ոչ ստրկական վերարտադրությունը, որը հնարավորություն կտար ճշգրիտ կերպով արտահայտելու բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները:

Ամփոփելով թարգմանության լեզվի հարցը, նշենք, որ ամենահիմնական և ամենատրամաբանական մոտեցումը Խորենացու վկայությունն է, որի վրա հենվելով էլ Անասյանը հիմնավորել է այն տեսակետը, ըստ որի, Հին Կտակարանը թարգմանվել է ասորական Պեշիթայից՝ ընդօրինակելով եբրայական կանոնը, իսկ Նոր Կտակարանը՝ հունարենից, ընդօրինակելով հունական կանոնը: Այսպիսով, Հին և Նոր Կտակարանների հայերեն թարգմանությունները պաշտոնական կանոնների վրա էին հիմնված թե՛ նախաեփեսոսյան շրջանում (պեշիթայական-ասորական կանոն) և թե՛ հետեփեսոսյան շրջանում (կեսարական-բյուզանդական կանոն)⁵¹:

⁴⁹ Տե՛ս Ակիմյան Ն., Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 35-36:

⁵⁰ Գիրք Ծննդոց (քննական բնագիր), Ներածություն, էջ 8:

⁵¹ Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հատոր Բ, էջ 318:

Ա.3. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՆՈՆԻ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒՄԸ

Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը, որը յոթերորդն էր թարգմանված լեզուների շարքում⁵², ունի անգնահատելի արժեք հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում: Ժամանակակից արևելագետներից Վյոբուսն այս մասին ասել է. «Հայերի կյանքում, որն անվերջ մաքառման և տառապանքի մի պատմություն է, այս թարգմանությունը կարևորագույն մի նշանակություն է ունեցել քրիստոնեական կրոնի ամրապնդման և ժողովրդի հոգեբանության ձևավորման համար»⁵³: Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնագրական կարևոր հարցերից մեկն է կանոնի ուսումնասիրությունը, որի հիմնական խնդիրը պարզելն է, թե որ գրքերն են թարգմանվել Ե դարում: Այս հարցով զբաղվել են Վեբերն⁵⁴ ու Տեր-Մովսիսյանը⁵⁵, որոնք փորձել են պարզել հայկական կանոնը Ե դարի հայ ինքնուրույն մատենագրության մեջ՝ պահպանված աստվածաշնչային մեջբերումների օգնությամբ: Հին Կտակարանյան մեջբերումներ կատարված են գրեթե բոլոր գրքերից, իսկ Նոր Կտակարանի պարագային միակ հիմնավոր վկայությունը Կորյունիին է, որի համաձայն, Նոր Կտակարանը պարունակում էր Ավետարանը, Գործք Առաքելոցը, Պողոսի 14 թղթերը, և Կաթողիկե թղթերը: Ինչպես տեսնում ենք, այստեղ բացակայում է Հովհաննու հայտնությունը և ընդհանրական նամակների քանակը: Վեբերը վկայակոչումներ է գտել Հակոբոս, Բ Պետրոս, Ա Հովհաննես և Հուդա առաքյալի ընդհանրական նամակներից: Իհարկե սրանից չենք կարող հստակ կանոն բխեցնել, բայց կարող ենք ասել, որ սա ասորական կանոնի ազդեցությունն է, որտեղ ընդհանրական նամակների քանակը ընդունելի յոթը չէ:

Ամփոփելով կարող ենք հստակորեն արձանագրել, որ մեր եկեղեցին մասնավորաբար չի անդրադարձել կանոնի խնդրին, այլ թարգմանելով Սուրբ Գիրքը որևէ կանոնական տարբերակից, ընդօրինակել է նաև տվյալ կանոնը: Գուցե կանոնականության պատկերացումը շատ հստակ չէր հայերի մոտ, բայց կարելի է եզրակացնել, որ թարգմանիչները նպատակ էլ չեն ունեցել դրան անդրադառնալու: Աստվածաշնչի Փութանակի թարգմանությամբ հայերը ընդօրինակել են ոչ միայն

⁵² Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և հայ մշակույթը, ՀԱԸ, 2001, էջ 9:

⁵³ Voobus A., Early Versions of New Testament, Manuscripts Studies, Stockholm, 1954, p. 137-138.

⁵⁴ Տե՛ս Վեբեր Ս., Ս. Գրոց յարգն ու արժէքը հին հայոց քով, «Հանդէս ամսօրեայ», 1897, էջ 130-132:

⁵⁵ Տե՛ս Тер-Мовсесян Месроп, История перевода Библии, стр. 191-192.

ասորական տեքստը, այլն՝ կանոնը: Իսկ արդեն հետեփեսոսյան շրջանում, երբ հունարեն լավագույն օրինակների հիմքով կատարվեց նոր թարգմանությունը և խմբագրումը եղածի, նույն սկզբունքով որդեգրեցինք հունական կանոնը: Թարգմանված գիրքը մտնում էր գործածության մեջ, հետևաբար համարվում էր կանոնական, մանավանդ, որ թարգմանիչներից մեկը և գլխավոր խմբագիրը Հայոց կաթողիկոսն էր՝ Սահակ Պարթևը:

ԳԼՈՒԽ Բ. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բ. 1. ՊԱՏՄԱԿԻ ԺՈՂՈՎԸ

Սուրբ Գրքի թարգմանությունից հետո կանոնի մասին հիշատակության հանդիպում ենք Պարտավի ժողովում: Այն Սուրբ Գրքի Հայոց կանոնին առընչվող առաջին և միակ պաշտոնական ժողովն է⁵⁶: Սիոն Ա Կաթողիկոսը⁵⁷ (767-775թթ.) հարկ համարեց վերանայելու և վերահաստատելու եկեղեցական կանոնները, ինչի համար էլ գումարեց ժողով Պարտավում, հավանաբար 768 թվականին⁵⁸: Պարտավի ԻԴ կանոնները տարբեր հարցեր են շոշափում:

Աստվածաշնչի կանոնի ուսումնասիրման համար կարևոր է հենց վերջին ԻԴ կանոնը, որը Սուրբ Գրքի Հին Կտակարանի կանոնն է տալիս: Սա թերևս հայ իրականության մեջ սուրբգրային կանոնի մասին առաջին և միակ եկեղեցական կանոնն է: Կանոնում ասվում է. «Եւ եղիցի ձեզ ամենեցուն՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց պաշտելի գիրք սուրբք՝ ի Հին եւ ի Նոր Կտակարանացն»⁵⁹, ինչին հաջորդում է կանոնական գրքերի ցանկը.

Հին Կտակարան՝ Մովսեսի գրքեր (Օննդոց, Ելից, Ղևտական, Թվոց, Երկրորդումն Օրինաց), Հեսու Նավե, Իսրայելի Դատավորներ, Հռութ, Ա-Դ Թագավորաց, Ա-Բ Մնացորդաց, Եզրի 2 գրքերը (հավանաբար Բ Եզրաս, Նեեմի), Հոբ, Մաղմուսաց, Սողոմոնի 3 գրքերը (Առակաց, Երգ երգոց, Ժողովող), ԺԲ մարգարեներ, Եսայի, Երեմիա, Եզեկիել, Դանիել:

Եւ արտաքուստ պատգամաւորեացի առ ի յուսուցանել զձեր մանկունս զուսումնաբազումսն Սիրաբայ Իմաստութեան⁶⁰:

Կանոնի ներածական հատվածում հետաքրքրական է այն հանգամանքը, որ խոստանալով տալ Հին և Նոր Կտակարանի պաշտելի գրքերի ցանկը, հիշատակվում է

⁵⁶ Մայիլյան Վարդգես սրկ., Մեկնություն Յայտնութեան Յովհաննու, գլուխ Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 24:

⁵⁷ Տե՛ս Ամենայն հայոց կաթողիկոսներ (Հայ եկեղեցու հանրագիտարան), Պրակ Ա, Սբ. Էջմիածին, 2008, էջ 226-227:

⁵⁸ Տե՛ս Օրմանյան Մաղաքիա արք., Ազգապատում, հատոր Ա, Սբ. Էջմիածին, 2001, էջ 1026-1027(այսուհետ՝ Օրմանյան Մաղաքիա արք., Ազգապատում, հատոր Ա):

⁵⁹ Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հատոր Բ, Երևան, 1971, էջ 17-18:

⁶⁰ Stone M., Armenian Canon Lists I – The Council of Partaw, Harward Theological review, vol. 66, No 4, 1973, p. 479-486.

միայն Հին Կտակարանի կանոնը, որից բացակայում են երկրորդականոն համարվող 9 գրքերը: Նոր Կտակարանի կանոնին չանդրադառնալը լուրջ մտածելու տեղիք է տալիս և դժվար է ասել՝ սա բացթողո՞ւմ է, թե՞ ապացույց վերջին՝ ԻԴ կանոնի հետագայի հավելում լինելու: Սա թույլ է տալիս ենթադրել, որ Պարտավի ժողովը ուղղակիորեն չի զբաղվել Աստվածաշնչի կանոնի խնդրով, և բնականաբար կանոն չի հաստատել, այլապես դա ոչ միայն Հին, այլև Նոր Կտակարանին առնչվող առանձին կետ կլիներ⁶¹: Հետևաբար վիճելի է մոտեցումը, թե Պարտավի ժողովի ԻԴ կանոնը հայոց եկեղեցու պաշտոնական կարգավիճակն է ներկայացնում: Այստեղ տեղին է նկատելը, որ տարբեր ձեռագրական օրինակներում Պարտավի կանոնները թվով տարբեր են՝ լինելով կա՛մ ԻԳ, կա՛մ ԻԴ: Խնդիրը ԻԲ կանոնն է, որը կազմված լինելով երկու մասից, հաճախ դիտարկվում է որպես երկու կանոն, ինչի վերջնարդյունքում ստացվում է ԻԴ⁶²:

Բուն Կանոնին անդրադառնալով պիտի ասենք, որ Պարտավի սահմանած «պաշտելի» գրքերը նույն Եբրայական կանոնի 22 գրքերն են, սակայն այլ դասավորությամբ⁶³: Նկատելի է, որ այս նույն 22 գրքերի մասին էր հիշատակում նաև Խորենացին:

Այստեղ միայն բացակայում են Նեեմիի և Եսթերի գրքերը⁶⁴. առաջինը հավանաբար կցված է Եզրասի գրքին, իսկ Եսթերի հարցը կարոտ է առավել խոր ուսումնասիրման: Այս ցուցակն ակնհայտորեն կապված է Առաքելական կանոնների հետ. այստեղ ավելացել է միայն Դատավորացը, բայց փոխարենը բացակայում են Եսթերը և Ա-Գ Մակաբայեցիսը, իսկ Հուդիթը, Տոբիթն ու Սողոմոնի իմաստությունը ընդհանրապես չեն հիշատակվում: Միրաքի իմաստությունը համարվում է «արտաքուստ» գիրք, որը պաշտելի չէ, այսինքն չի կիրառվում ծեսում, բայց կիրառելի է երեխաների դաստիարակության համար:

Անհասկանալի է այն հանգամանքը, որ նույն ԻԴ կանոնում անդրադրձ է արվում երկու բացարձակապես իրար հետ կապ չունեցող հարցերի: Առաջին մասում խոսվում է անմաքրության շրջանում գտնվող աղջկա համար պսակ չանելու մասին, իսկ երկրորդ մասում տրվում Սուրբ Գրքի կանոն: Այս կանոնը թվում է թե պատահական հավելում է

⁶¹ Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և Հայ մշակույթը, էջ 25:

⁶² Տե՛ս Մելիք-Թանգյան Ներսես արք., Հայ Եկեղեցական Իրավունքը, Բ հրատ., Ս. Էջմիածին, 2009, էջ 347:

⁶³ Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը (հայագիտական ուսումնասիրություններ), Երևան, 2006, էջ 166 (այսուհետ՝ Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը):

⁶⁴ Ազնավորյան Զարեհ արք., Աստվածաշունչին վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 99:

Պարտավի ժողովի կանոններին, արված խմբագրի կամ ընդօրինակողի կողմից⁶⁵: Իսկ թե ինչն է առանձին կանոն չի դարձել, այլ կցվել է եղած վերջին կանոնին, ենթադրում ենք, որ առկա վկայությունների պատճառով է եղել. գուցե արդեն կար հիշատակարան, որտեղ Պարտավի կանոնները թվով ԻԴ էին նշված, ուստի կատարվել է հավելում եղած վերջին կանոնին ընդհանուր կանոնների թիվը չխախտելու համար:

Հայոց եկեղեցու մեջ Պարտավի ժողովից հետո չկա որևէ կանոնական գրություն կամ ժողով, որ սահմանի թիվն ու ցանկը Աստվածաշնչի ընդունելի գրքերի⁶⁶: Հայոց ազգային եկեղեցական ժողովները պաշտոնապես երբեք չեն զբաղվել Աստվածաշնչի կանոնական գրքերի հարցով⁶⁷:

⁶⁵ Տե՛ս Պողարյան Ն., Պարտավի ժողովին կանոններուն վերջին յօդուածը, «Միոն», 1944, էջ 26-27

⁶⁶ Շամլյան Դանիել վրդ., Սուրբ Գրոց կանոնական և երկրորդականոն գիրքերը, «Միոն», փետրվար-մարտ, 1966, էջ 83:

⁶⁷ Մանուկյան Արտակ եպս., Աստվածաշունչ մատյանը, էջ 146:

Բ. 2. ԿԱՆՈՆԱԿԱՆ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պարտավի ժողովից հետո հայ իրականության մեջ ի հայտ եկան միայն կանոնական ցանկեր, որոնք որոշ հեղինակների անձնական ընկալման արդյունքն էին և ոչինչ ավելի: Սրանք իհարկե եկեղեցու կանոն չեն կարող համարվել, բայց և կանոնի պատմության ուսումնասիրության գործում չեն կարող արհամարհվել:

Պարտավի ժողովից գրեթե մեկ դար առաջ⁶⁸ հանդիպում ենք Կանոնի երկրորդ հիշատակությանը **Անանիա Շիրակացու** մոտ (Է դար)⁶⁹: Նա իր նշանավոր «Թիւք որչափութեան տանց Հին և Նոր Կտակարանաց» (Ստիխոմետրիա) երկում⁷⁰, որը պահպանվել է ուշմիջնադարյան ձեռագրերում, ներկայացրել է սուրբգրային հետևյալ կանոնը.

Հին Կտակարան՝ Մովսեսի գրքեր (Ծննդոց, Ելից, Ղևտական, Թվոց, Երկրորդումն Օրինաց), Հեսու Նավե, Դատավորաց, Հռութ, Ա-Դ Թագավորաց, Ա-Բ Մնացորդաց, Ա-Դ Մակարայեցիս (չնայած, որ Դ Մակարայեցիսը առհասարակ հայտնի չէ հայակական թարգմանությամբ), ԺԲ փոքր մարգարեներ, Եսայի, Երեմիա, Բարուք, Ողբ Երեմիայի, Երեմիայի նամակը (այս գիրքը չափազանց հազվադեպ է հանդիպում հայկական Աստվածաշնչի կազմում), Եզեկիել, Դանիել, Սաղմոսաց, Առակաց, Էկլեսիաստես (Ժողովող), Օրհնությունների օրհնություն (Երգ երգոց), Սողոմոնի իմաստություն, Հոր, Միրաք, Ա-Բ Եզրաս (հայ ավանդության համար հազվադեպ պարզաբանմամբ, որ սա Նեեմիին է՝ Բ Եզրաս-Նեեմի), Եսթեր, Տոբիթ, Հուդիթ:

Նոր Կտակարան՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես, Գործք Առաքելոց, Հակոբոս, Ա-Բ Պետրոս, Ա-Գ Հովհաննես, Հայտնություն, Հռոմեացիս, Ա-Բ Կորնթացիս, Գաղատացիս, Եփեսացիս, Փիլիպեցիս, Կողոսացիս, Ա-Բ Թեսաղոնիկեցիս, Եբրայեցիս, Ա-Բ Տիմոթեոս, Տիտոս, Փիլիմոն:

Շիրակացու կանոնն առաջինն է, որ ներառում է և՛ Հին, և՛ Նոր Կտակարանները միաժամանակ: Շիրակացին բացի ցանկ տալը, կատարել է նաև Սուրբ Գրքի տնաստում⁷¹: Տների թիվը հաշվելը տվյալ գրքի կանոնական լինելու նշան է⁷²: Շահե սրբազանը

⁶⁸ Ազնավուրյան Զարեհ արք., Աստվածաշունչի վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 100:

⁶⁹ Տե՛ս և Քյոսեյան Հ., Ներածություն Հայ եկեղեցական մատենագրության, էջ 180-183 (անտիպ):

⁷⁰ Մատենագիրք Հայոց, Է դար, հատոր Դ, Անթիլաս, 2005, էջ 790-791:

⁷¹ Տե՛ս և Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և Հայ մշակույթը, էջ 25:

⁷² Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը, էջ 167:

Շիրակացու կանոնի մասին խոսելիս ասում է. «Շիրակացիի ցանկին մեջ յիշուած են Նեմեայ եւ Յայտնութեան գիրքերը, սակայն առանց տնահամարի, ինչը, որ կը թուի նշանակել, թէ այդ գիրքերը կը կարդացուէին, ծանօթ էին, սակայն ոչ պաշտելի»⁷³: Ենթադրությունը հետաքրքրական է և անգամ հավակնում է լինել է դարի կանոնականության սկզբունքը, բայց հստակ չէ, թէ այս եզրակացությունը որտեղից է արվում: Բնագիրը մեզ է հասել տարբեր ավանդություններով: Անշուշտ նա հիմնվել է Շիրակացու այս երկը մեզ ավանդած ձեռագրերից մեկի վրա, որտեղ տվյալները համապատասխանում են իր ներկայացրածին, բայց կարծում ենք, այսպիսի եզրահանգում անելու համար նա պիտի համեմատեր երկի եղած բոլոր տարբերակները: Կա նաև այլ տարբերակ, որը վերևում ներկայացրինք, որտեղ նախ նշված չէ Նեմի անունը, այլ՝ Բ Եզրաս: Եվ որ կարևոր է և՛ Հայտնության, և Բ Եզրասի դիմաց գրված են իրենց տների քանակը, որ են Ն և ՌՊ համապատասխանաբար⁷⁴:

Բուն կանոնի մասին խոսելիս, Մայքլ Սթոունը կարծում է, որ Շիրակացու կանոնը թարգմանություն է հունարենից⁷⁵ և հիմնավորում է իր վարկածը երկու խոշոր փաստերով: Նախ, որ Երեմիայի նամակը հայ ավանդության մեջ հանդիպում է խիստ հազվադեպ, իսկ Դ Մակաբայեցվոց գիրքը առաջին անգամ է հիշատակվում հայ իրականության մեջ և առհասարակ չկա հայերեն թարգմանությամբ⁷⁶: Ֆեհրաթյանը զարգացնելով հունարենից թարգմանված լինելու սույն կարծիքը, ասում է, որ հունարենից թարգմանությունը կարող էր արվել տնատելու նպատակով⁷⁷: Այնուամենայնիվ այս բոլոր մոտեցումներն իրենց վերջնական լուծումը կգտնեն, եթե ի հայտ գա այնպիսի մի հունական աղբյուր, որի կանոնը կհամապատասխանի Շիրակացու տված ցանկին: Իսկ մինչ այդ դժվար է ասել վերը բերված ցանկը զուտ թարգմանություն է, թե հեղինակային ցանկ:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Տե՛ս Աբրահամյան Ա., Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 257-259:

⁷⁵ Stone M., Armenian Canon Lists II – The Stichometry of Anania of Shirak (c. 615 - c. 690 C.E.), Harward Theological Review, vol. 68, No. 3/4, 1975, p. 253-260.

⁷⁶ Նույն տեղում, էջ 254:

⁷⁷ Տե՛ս Ֆեհրաթյան Պ., Անանիա Շիրակացու անտիպ էջերեն, Հանդես ամսօրեայ, 1908, էջ 20-23, հմմտ. Тер-Мовсесян Месроп, История перевода Библии, стр. 259-260.

Աստվածաշնչի կանոնի հաջորդ ցանկը **Հովհաննես Վանական Վարդապետի** անունով հայտնի ցուցակն է, որ գտնվում է **Մխիթար Այրիվանեցու** (1222-1307) ընդօրինակած (1285թ.) Աստվածաշնչի սկզբում⁷⁸: Սակայն այնքան էլ հստակ չէ, թե ո՞վ է այս Հովհաննես վարդապետը: Կա երկու կարծիք՝ կա՛մ նա Հովհաննես Իմաստասերն է (1045-1129), կա՛մ էլ Վանական վարդապետը (1181-1251): Հովհաննես Իմաստասերի մասին գիտենք, որ փոքր տարիքում ստանալով սարկավագության աստիճան, երկար ժամանակ մնացել է այդ աստիճանին՝ չունենալով քահանայի համար հասուն տարիք, ինչի համար էլ ստացել է Սարկավագ մականունը⁷⁹: Այս համբավված գրողի կենսագրության մասին, ցավոք, սակավ տեղեկություններ ունենք⁸⁰, եղածներն էլ ստուգված չեն⁸¹: Նույնը կարելի է ասել նաև Վանական Վարդապետի մասին⁸²: Նրա մասին գիտենք, որ հիմնել է դպրոց և մատենադարան Խորանաշատ վանքում, որտեղ իր նշնավոր աշակերտներից են եղել Վարդան Արևելցին և Կիրակոս Գանձակեցին⁸³: Այս հարցում կանոնով զբաղվող հեղինակները (Պողարյան, Աճեմյան, Ներսեսյան) միտված են ընդունելու Հովհաննես Իմաստասերին՝ որպես կանոնի հեղինակի: Մենք այլ կարծիքի ենք, գուցե հեղինակության իմաստով Վանական վարդապետը զիջում է Իմաստասերին, բայց ժամանակային իմաստով շատ ավելի մոտ է Մխիթար Այրիվանեցուն⁸⁴, բացի դրանից, ի տարբերություն Իմաստասերի, թողել է մեկնողական մեծ ժառանգություն, ինչից կարելի է եզրակացնել, որ Սուրբ Գրքին այդքան առնչված, այդքան մեկնած հեղինակը կարող էր զբաղվել նաև վերջինիս կանոնի քննությամբ: Սրանից էլ հետևում է, որ Այրիվանեցին կարող էր ազդեցություն կրել նրա կանոնից: Շրջանցելով հեղինակի խնդիրը, բախվում ենք մեկ այլ խնդրի. Այրիվանեցու ձեռագիրը մեզ է հասել երկու տարբեր օրինակներով⁸⁵, որոնք ներկայացնում ենք ստորև.

⁷⁸ Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը, էջ 167:

⁷⁹ Ալիշան Ղ., Յուշիկը Հայրենեաց Հայոց, Բ տպագրություն, Վենետիկ, 1921, էջ 281:

⁸⁰ Տե՛ս Աբրահամյան Գ., Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 13-33:

⁸¹ Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 43:

⁸² Տե՛ս Քյոսեյան Հ., Ներածություն Հայ եկեղեցական մատենագրության, էջ 454 (անսխիպ):

⁸³ Եկեղեցու հայրերը և վարդապետները Սուրբ Մկրտության խորհրդի մասին, աշխատասիրությամբ Քյոսեյան Հակոբ, Երևան, 2015, Գիրք Բ, էջ 334:

⁸⁴ Տե՛ս Հարությունյան Հ., Մխիթար Այրիվանեցի, Երևան, 1985, էջ 20-45:

⁸⁵ Տե՛ս Stone M., Armenian Canon Lists III – The Lists of Mechitar of Ayrivank, Harvard Theological review, vol. 69, No 3/4, 1976, p. 289-300.

Կարգաւորութիւնք գրոց սրբոց որք ստուգաբանեցան ի Սարկաւագ վարդապետին եւ գրեցան յինէն ի Տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի մին տուփ յաւուրս ՃՀ	Ջայսօրիկ ժողովեցի ի միասին եւ գրեցի յաւուրս Ճ եւ Հ եւ Տէր Մխիթար վարդապետ:
Արարածոց	Արարածոց, որը և Ծննդոցն է
Ելից	Ելք Եզիպտոսից
Ղևտացվոց	Ղևտացիներ
Թվոց	Թվեր Իսրայելի
Երկրորդ Օրենք	
Հետու Նավե	Նավեի որդի Հետու
Դատավորաց	
Հռութ Մովսարացի	Հռութ
Ա-Դ Թագավորաց	
Ա Մնացորդաց	Մնացորդաց Ա, Բ
Բ Մնացորդաց	
Ա Եզրաս	Բ Եզրաս Գ Եզրաս ⁸⁶
Բ Եզրաս	
Ա Մակաբայեցվոց	Մակաբայեցիներ Ա, Բ, Գ
Բ Մակաբայեցվոց	
Գ Մակաբայեցվոց ⁸⁷	
Հովսեփ, որ Կայիափա քահանայապետն է ⁸⁸	
Ենովքի հայտնություն	
Կտակ նահայրերի	Կտակ նահապետների

⁸⁶ Սա արևմուտքում ընդունված է համարել Դ Եզրաս:

⁸⁷ Հնարավոր է, որ այստեղ վրիպակ կա, որովհետև հաճախ երեքի փոխարեն հիշատակվում են Մակաբայեցիների չորս գրքերը, չնայած որ Դ գիրքը բացկայում է Այրիվանեցու Աստվածաշնչից:

⁸⁸ Հնարավոր է, որ սա առանձին շարադրանք չէ, այլ գրություն, որը մատնանշում է Դ Մակաբայեցիս գրքի հեղինակին:

Ասաներթի աղոթք	Ասաներթի խոստովանություն
Տոբիթ	Հուդիթ
Հուդիթ	Տոբիթ
Եսթեր	Եսթերի պատմություն
Եզր Սաղաթիել⁸⁹	
Հոբ	
Սաղմոս Դավթի	Սաղմոսներ Դավթի
Տասներկուսը⁹⁰	
Առակաց	Առակաց Սողոմոնի
Եսայի	Եսայի մարգարե
	ԺԲ մարգարեներ
Երեմիա⁹¹	
Եզեկիել	
	Հոբ
Դանիել	
Գ Մնացորդաց	
Երեմիայի նամակը⁹²	
Մահ Մարգարեից	Մահերը մարգարեների
Հեսու Սիրաք	Սիրաքի որդի Հեսու

Այս երկու ձեռագրական ավանդությամբ պահպանված կանոնները իրարից բավական տարբեր են: Սկսենք նախաբանից. առաջին ցանկում ասվում է. «Դասավորություն Սուրբ Գրքերի, որոնք ստուգաբանվեցին Սարկավագ Վարդապետի կողմից և գրվեցին իմ՝ Տեր Մխիթար վարդապետ պատմագրի կողմից մեկ տուփում հարյուր յոթանասուն օրերում»: Այստեղ հատկապես կարևոր է, թե ի՞նչ է հասկացել Մխիթար Այրիվանեցին ստուգաբանել ասելով: Այն հիմնականում ստույգ, ճիշտ խոսքի

⁸⁹ Սա հավանաբար Գ Եզրասն է:

⁹⁰ Այստեղ խոսքը տասներկու փոքր մարգարեների մասին է:

⁹¹ Այս գիրքը կա երկու ցանկերում, տարբերությունը միայն գրության ձևն է. առաջինում գրված է Երեմիայ, իսկ երկրորդում՝ Երեմիեն:

⁹² Բնագրում՝ Վասն Երեմիայի (ի) Բարելոն:

իմաստն ունի⁹³, ուստի Այրիվանեցին հավանաբար նկատի ունի ճշտված կանոնը: Առավել հետաքրքրական է, որ երկրորդ օրինակում միայն իր անունն է հիշատակված և հստակ ասել, թե սա վրիպակ է, անկարելի կլինի: Իսկ միգուցե առաջին կանոնը բուն Հովհաննես վարդապետի կանոնն է, որտեղ նաև իր անունը կա, իսկ մյուսը անձամբ Այրիվանեցունը. դժվար է ասել, սա միայն մեր ենթադրությունն է: Բացի սրանից կա ևս մեկ խնդիր. ձեռագրերը վերագրվում են նույն հեղինակին, բայց ունեն անհասկանալի տարբերություններ: Անգեն աչքով նկատելի է, որ Սարկավագ վարդապետի անունը կրող ցանկը աչքի է ընկնում իր պարզ, մեկնողական բնույթով: Բացի դրանից Սարկավագ վարդապետի անունը կրող ցանկը ունի 40, իսկ Այրիվանեցունը՝ 32 գրքեր: Բիարկե որոշ տեղերում միայն Այրիվանեցու անունը կրող ցանկը ընդհանրացնում է գրքերը մեկ անունով, բայց և այնպես անգամ սա ահռելի տարբերություն է: Հետաքրքրական է, որ Շահե սրբազանը խոսելով Այրիվանեցու ցանկի մասին, չի խոսում առկա երկձևության մասին, այլ ներկայացնում է այն տարբերակը, որում կա Սարկավագ վարդապետի մասին հիշատակությունը և, որ ամենակարևորն է, ցանկում անում երկու վրիպակ: Նախ բաց է թողնված Գ Մակաբայեցվոց գրքին հաջորդող Հովսեփի գիրքը և սխալմամբ երկու անգամ հիշատակված է Հոբի գիրքը⁹⁴: Այս նույն ցանկը նույն վրիպակներով ընդօրինակել է Ներսես ավագ քահանա Ներսեսյանը⁹⁵: Վերադառնալով Այրիվանեցու ցանկին, խորագրից անմիջապես հետո ներկայացված է Նոր Կտակարանի գրքերի ցանկը⁹⁶. սա զարմանալի և յուրօրինակ դեպք է, երբ Նոր Կտակարանի ցանկը ներկայացվում է Հնից առաջ, բայց թե ինչն էլ է այդպես՝ դժվար է ասել: Ցանկը ներկայացնում ենք ստորև.

Նոր Կտակարան՝ Հովհաննես, Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Գործք Առաքելոց, Հակոբոս, Ա-Բ Պետրոս, Ա-Գ Հովհաննես, Հուդա, Աղերս Եվթաղի, Հռոմեացիս, Ա-Բ Կորնթացիս, Կորնթացիների թուղթ (Թուղթ Կորնթացւոցն), Գ Կորնթացիս, Գաղատացիս, Եփեսացիս, Փիլիպեցիս, Կողոսացիս, Ա-Բ Թեսաղոնիկեցիս, Եբրայեցիս, Ա-Բ Տիմոթեոս, Տիտոս, Փիլիմոն, Հայտնություն, Հանգիստ Հովհաննու:

⁹³ Աւգերյան Մկրտիչ, Ճելալյան Գրիգոր, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 737:

⁹⁴ Տե՛ս Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը, էջ 181-183:

⁹⁵ Տե՛ս Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և Հայ մշակույթը, Հավելված 2, էջ 86-87:

⁹⁶ Հովսեփյան Գարեգին արք., Մխիթար Այրիվանեցի, Նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 15:

Այս ցանկը ունի մի շարք յուրահատկություններ. նախ Ավետարաններից առաջինը դրված է Հովհաննեսինը, հավանաբար Ծննդոց գրքի հետ ունեցած աստվածաբանական կապերի պատճառով: Ղուկասի երկու գործերը հաջորդում են իրար: Ինչպես նաև պարունակում է Եվթաղի աղերսը, Կորնթացիների թուղթը, Գ Կորնթացիսը և Հովհաննու Հանգիստը, որոնք նորություն են հայ իրականության համար: Այստեղ նաև Հայտնությունն է կանոնում ընդգրկված, ինչը քիչ հավանական է, որովհետև դրանից տարիներ հետո միայն պիտի Ներսես Լամբրոնացին այն թարգմաներ⁹⁷:

Այրիվանեցու այս ցանկը համապատասխանում է իր ընդօրինակած Աստվածաշնչի բովանդակությանը: Ցանկը յուրովի է նաև նրանով, որ կանոնական գրքերը ներկայացնելուց առաջ ներկայացվում է ծածուկ գրքերի ցանկ.

Ադամ

Ենովք

Սիբիլ

ԺԲ նահապետներ

Հովսեփի աղոթք

Վերացումն Մովսեսի

Ելդադ և Մոդադ

Սողոմոնի սաղմոսներ

Եղիայի ծածուկ

Դանիելի յոթերորդ տեսիլք

Սա թերևս հայ իրականության մեջ պարականոն գրքերի առաջին ցուցակն է: Այսպիսով կարող ենք ասել, որ չնայած սա Հայ եկեղեցու պաշտոնական կանոնը չէ, այլ Այրիվանեցու հայեցողությամբ կազմված անձնական ցանկ, որը սակայն կարևոր է կանոնի պատմության ուսումնասիրության գործում:

⁹⁷ Մեքուլայ Օ., Նոր Կտակարանի գրքերու կարգը հայոց քով, Վիեննա, 1949, էջ 33:

Կանոնի հաջորդ հիշատակությունը հայ եռամեծար վարդապետ **Գրիգոր Տաթևացուն**ն է (1344-1409)⁹⁸: Սուրբ Գրիգոր Տաթևացին իր նշանավոր «Գիրք Հարցմանց» (ավարտել է 1397թ. -ին) աշխատության մեջ ունի առանձին հարց կանոնի վերաբերյալ, որին պատասխանելով տալիս է երկու կանոն. մեկը՝ ընդհանուր, մյուսը՝ մասնավոր⁹⁹: Այս երկու ցանկերը իրարից բավական տարբեր են: Ցանկը ներկայացնում ենք ստորև.

Ընդհանուր	Մասնավոր ¹⁰⁰
Արարածոց	
Ելից	
Ղևտացվոց	
Թվոց	
Երկրորդուն օրինաց	
Հեսու	
Դատավորաց	Դատավորաց և Հուլթ
Հուլթ	
Ա Թագավորաց	Ա-Բ Թագավորաց
Բ Թագավորաց	
Գ Թագավորաց	
Դ Թագավորաց	Գ-Դ Թագավորաց
Ե Թագավորաց	
Ա Մնացորդաց	Ա-Բ Մնացորդաց
Բ Մնացորդաց	
Ա Եզրաս	Եզրաս
Բ Եզրաս	
Նենմի	
Եսթեր	
Հուդիթ	

⁹⁸ Տե՛ս Քյոսեյան Հ., Ներածություն Հայ եկեղեցական մատենագրության, էջ 568-572 (անտիպ):

⁹⁹ Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, հատոր 7, Պրակ 31, էջ 450-451:

¹⁰⁰ Այս ցանկում գրքերի հերթականությունը պահպանված չէ՝ առավել հստակ համեմատություն ունենալու նպատակով:

Տոբիթ ¹⁰¹	
Ա Մակաբայեցվոց	
Բ Մակաբայեցվոց	
Գ Մակաբայեցվոց	
Սաղմոսաց	
Առակաց	
Ժողովող	
Երգ երգոց	
Սողոմոնի իմաստություն	
Սիրաք	
Հոբ	
Եսայի	
ԺԲ մարգարեներ	
Երեմիա	
Բարուք	
Ողբ	
Դանիել	
Եզեկիել	
Կտակք մարգարեից	

Ինչպես տեսնում ենք, այս երկու ցանկերից երկրորդը ամբողջությամբ համապատասխանում է Եբրայական կանոնին և ունի 22 գիրք: Բարդ է ընդհանուր կանոնի պարագան, որովհետև այստեղ ներառված են ոչ միայն երկրորդական գրքերը այլև՝ Կտակք մարգարեիցը, որը պարականոն է: Այս առաջին կանոնը, ըստ Չարեհ սրբազանի, չի ներկայացնում հայկական կանոնը¹⁰²: Ավելի կանոնական է թվում երկրորդ կանոնը, որը եբրայական կանոնն է և հիշեցնում է Խորենացու հիշատակությունը և Պարտավի ԻԴ կանոնը: Եվ որ կարևոր է, այս երկրորդ կանոնը արդեն ունի բաժանում՝

¹⁰¹ Ցանկում հիշատակված է որպես Տոբիթ և Տուբիա:

¹⁰² Տե՛ս Ազնավորյան Չարեհ արք., Աստվածաշունչի վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 103:

Օրենք, Սարգարեներ, Սրբազան գրքեր, ինչը խոսում է նրանց կայունացած լինելու մասին: Այս երկրորդ ցանկի վերջում կա հավելում, որ Սիրաքը, Իմաստությունը, Հուդիթը, Տոբիթն ու Տուբիան, Մակաբայեցիներն ու Կտակները և մյուսները սրանց մեջ չեն հիշատակվում, չնայած Աստվածաշունչ գրքերի կարգում ընդունված են: Այստեղ հետաքրքիր է հատկապես այն, որ Տաթևացին իր ներկայացրած կանոնում առկա գրքերին կոչում է աստվածակերտ, իսկ երկրորդականներին՝ աստվածաշունչ: Չարեհ սրբազանը այս բառերի հարաբերությունը բացատրում է ասելով, որ Աստվածակերտը կարելի է ասել Աստծո կողմից գրված, իսկ Աստվածաշունչը՝ աստվածային ներշնչումով տրված, թեպետ ոչ աստվածային հեղինակություն¹⁰³: Այս երկրորդ ցանկում սակայն չկա հիշատակություն Նոր Կտակարանի մասին: Նոր Կտակարանի կանոնը պահպանված է միայն ընդարձակ կանոնում և ունի հետևյալ տեսքը.

Նոր Կտակարան՝ Դ Ավետարան, Հայտնություն, Հանգիստ Հովհաննու, Գործք Առաքելոց, Ընդհանրական նամակներ, Հռոմեացվոց, Ա-Բ Կորնթացվոց, Գաղատացվոց, Եփեսացվոց, Փիլիպեցվոց, Կողոսացվոց, Ա-Բ Թեսաղոնիկեցվոց, Եբրայեցվոց, Ա-Բ Տիմոթեոս, Տիտոս, Փիլիմոն, Գ Կորնթացվոց, Թադեոս¹⁰⁴, Հակոբի ընթերցում, Առաքելական երկու կանոններ (Բ կանոնք Առաքելոցն), Հուստոսի խոսքերը¹⁰⁵, Դիոնիսիոս Արեոպագետի¹⁰⁶ գիրքը, Պետրոս առաքյալի քարոզչությունը:

Այս կանոնը նորություն է հայակական կանոնի համար, որովհետև այստեղ գրքերի քանակը հասնում է 36-ի: Դժվար է ասելը, թե ինչի հետ է սա կապված: Շահե սրբազանը այսպես է բացատրում. «Հետևելով եբրայական ավանդությանը, որտեղ կանոնական գրքերի թիվը սահմանափակվում է քսաներկուսով, որը և եբրայերեն տառերի քանակն է, Տաթևացին նույնպես հայ Աստվածաշնչի գրքերի թիվը համապատասխանեցրել է հայերեն այբուբենի տառերի քանակին: Այլապես հիշյալ վեց գրքերը գոյություն չունեն Աստվածաշնչի ձեռագրերի մեջ, անգամ Թադեոս առաքյալի վկայությունը, չնայած Հայ

¹⁰³ Նույն տեղում, էջ 104:

¹⁰⁴ Սա հավանաբար հունարեն և ասորերեն պահպանված Գործք Թադեոսի գրությունն է, որը պատմում է Եղեսիայի Արգար թագավորի՝ Քրիստոսի հետ ունեցած թղթակցության մասին, Թադեոսի քարոզչության և Հայաստանում նահատակության մասին:

¹⁰⁵ Կա տարակարծություն այս գրքի մասին, այն կա՛մ Հովսեփիոս Փլաբիոսին է մատնանշում, կա՛մ էլ պարականոն է հյուսն Հովսեփի մասին:

¹⁰⁶ Սա նույն Դիոնիսիոս Արիսպագացին է:

եկեղեցու առաքելականության հետ իր ունեցած կապին»¹⁰⁷: Այս համապատասխանեցնելու թեման զարգացրել է Ներսես ավագ քահանան ասելով. «Թերևս նա փորձել է Նոր Կտակարանի գրքերի քանակը համապատասխանեցնել կա՛մ Հին Կտակարանի գրքերի, կա՛մ էլ հայոց այբուբենի երեսունվեց տառերի քանակին»¹⁰⁸: Մենք արդեն խոսելով հինկտակարանյան ընդարձակ կանոնի մասին ասել ենք, որ այնտեղ կա 36 գիրք, ուստի Նորն էլ 36 լինելով ընդհանուր հաշվով ստացվում է 72 գիրք ընդարձակ կանոնում: Այս վերջին վեց գրքերը շատ կասկածելի են և վստահաբար ոչ կանոնական Հայ եկեղեցու համար¹⁰⁹:

Կիլիկյան իրականության մեջ սուրբգրային կանոնի հանդիպում ենք **Սարգիս Շնորհալու** (1100-1167) Ընդհանրական նամակների մեկնության մեջ¹¹⁰: Այստեղ Պետրոսի Բ Թղթի առաջաբանում Սարգիս Շնորհալու տված Ս. Գրքի կանոնական ցանկը ունի հետևյալ տեսքը

Հին Կտակարան՝ Արարածոց, Ելից, Թվոց, Ղևտական, Բ Օրենք, Հեսու¹¹¹, Դատավորաց, Հռութ, Ա-Դ Թագավորաց, Սաղմոսաց, Առակաց, Ժողովող, Երգ երգոց, Հոբ, Եսայի, Եզեկիել, Դանիել, Երեմիա, ԺԲ մարգարեներ, Եզր, Ա-Բ Մնացորդաց, Եսթեր, Հուդիթ, Մակաբայեցվոց (մակաբայեցիքն):

Եւ առ սոսա՝ որք երկբայութիւնս ունին

Սիրաքի իմաստություն¹¹²

Եզրաս (հանդերձ սոքիմբք և այլ ևս եօթանասուն և երկուք՝ որ ի ծածուկք են)¹¹³

Նոր Կտակարան՝ Դ Ավետարան, Գործք Առաքելոց¹¹⁴, Պողոսի ԺԴ թղթերը, Հակոբոս, Ա Պետրոս, Ա Հովհաննես:

¹⁰⁷ Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը, էջ 192:

¹⁰⁸ Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և Հայ մշակույթը, էջ 29:

¹⁰⁹ Տե՛ս Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը, էջ 188-189, 190-192:

¹¹⁰ Տե՛ս Սարգիս վրդ. Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, Երուսաղէմ, 1998, էջ 398-399 (այսուհետև՝ Սարգիս վրդ. Շնորհալի):

¹¹¹ Բնագրում գրված է «ընդ նոսին և յեսուն», ինչը գուցե Վեցամատյանի ընկալման արդյունք է:

¹¹² Բնագրում՝ Յեսու Սիրաքայ:

¹¹³ Այս յոթանասուներկու ծածուկ գրքերի մասին ոչինչ հայտնի չէ:

¹¹⁴ Բնագրում՝ Պրակք Առաքելոց:

Անդրադառնալով Սարգիս Շնորհալու կանոնին, պիտի ասենք, որ Հին Կտակարանի կանոնը ամբողջությամբ համընկնում է Եբրայական կանոնին, որին ավելացել են Հուդիթն ու Մակաբայեցիները¹¹⁵: Այստեղ հակասական է հատկապես Մակաբայեցիների գրքի առկայությունը, որովհետև նշված չէ, թե կոնկրետ որ, կամ թե քանի մակաբայեցիներ նկատի ունի հեղինակը: Զարմանալի է նաև այն, որ Հնգամատյանում Թվոց գիրքը դրված է դրված է Ղևտականից առաջ, ինչը եզակի դեպք է: Իսկ Նոր Կտակարանյան կանոնը բավականին համեստ է, այստեղ առկա են Ընդհանրական նամակներից միայն երեքը, որը ասորական կանոնի համընկնում է, իսկ մյուս չորս թղթերը Սարգիս Շնորհալին համարում է երկբայելի¹¹⁶: Այստեղ կա նա մի հետաքրքրական հանգամանք, որ բացի կանոնական գրքեր թվարկելը, Շնորհալին անդրադարձել է նաև խոտելի, մերժելի գրքերին, որոնք են.

Տոն Մարիամի

Թովմասի ավետարան¹¹⁷

Քրիստոսի մանկության ավետարան

Սա ապացույց է կանոնական գիտակցության, այսինքն այդ շրջանում հստակ էին գոնե ապոկրիֆ, երկրորդական և կանոնական գրքերը: Գուցե սա իր անձնական կարծիքն է, բայց հետաքրքրական է ուսումնասիրել կանոնի զարգացման պատմությունը քննելիս:

¹¹⁵ Ազնավորյան Զարեհ արք., Աստվածաշունչի վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 102:

¹¹⁶ Տե՛ս Սարգիս վրդ. Շնորհալի, էջ 398:

¹¹⁷ Այս գրությունը գտնում ենք փակագծերում:

Բ.3. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆԸ

Տպագրության գյուտից հետո (1455թ.) ամբողջ աշխարհը ոգևորվեց գրատպությամբ: Աշխարհի զարկերակը չէր կարող չզգալ և Հայաստանը, ինչի արդյունքը եղավ 1512 թվականին հայերեն առաջին գրքի՝ Ուրբաթագրքի տպագրությունը: Դարից ավելի ժամանակ պետք եկավ հայերին Աստվածաշնչի տպագրության գործը գլուխ բերելու համար: Հիմնաքարը դրեց Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից Եվրոպա ուղարկված Մատթեոս Ծարեցի սարկավագը՝ 1656 թվին¹¹⁸: Ծարեցին ի վերջո հիմնում է տպարան Ամստերդամում՝ Ավետիս Դլնջեցու բարերարությամբ: Շատ չանցած վախճանվում է, և անտերունչ տպարանին տեր դառնալու համար Հակոբ կաթողիկոսը Ամստերդամ է ուղարկում Ուշիի Սուրբ Սարգիս վանքի վանահայր, Ավետիս Դլնջեցու եղբայր Ոսկան վարդապետին: Հենց **Ոսկան վարդապետ Երևանցու** ջանքերով և իր երկու աշակերտ Կարապետ Անդրիանացու և Օհան Երևանցու հետ էլ 1666 թվականին տպագրվում է հայերեն առաջին Աստվածաշունչը¹¹⁹: Այն Հեթում թագավորի ձեռագիր օրինակի ընդօրինակությունն է, բայց նրա մեջ կատարված միջամտություններով¹²⁰: Կանոնի հարցով այն հիմնականում հետևում է հունականին, բայց և նկատելի են ազդեցություններ Վուլգաթայից: Ոսկանյան Աստվածաշնչի կանոնն ունի հետևյալ տեսքը.

Հին Կտակարան¹²¹՝ Հնգամատյան, Հեսու, Դատավորաց, Հռութ, Ա-Դ Թագավորաց, Ա-Բ Մնացորդաց¹²¹, Ա-Բ Եզրաս, Տոբիթ, Հուդիթ, Եսթեր, Հոբ, Սաղմոսաց, Առակաց, Ժողովող, Երգ Երգոց, Սողոմոնի իմաստություն (Գիրք Իմաստութեան), Սիրաք (Ժողովող. որ է Սիրաք), Եսայի, Երեմիա, Բարուք, Եզեկիել, Դանիել, ԺԲ մարգարեներ, Ա-Գ Մակաբայեցվոց, Գ-Դ Եզրաս:

Նոր Կտակարան¹²²՝ Դ Ավետարան, Գործք Առաքելոց, Պողոսի ԺԴ նամակներ, Ընդհանրական նամակներ, Հայտնություն (Տեսլեանն Յօհաննու):

Կանոնը աչքի է ընկնում հունականին ունեցած հարազատությամբ, միայն Եզրասի Գ և Դ գրքերն են ավելացվել, ինչը հավանաբար լատինական ազդեցության հետևանք է:

¹¹⁸ Մանուկյան Արտակ արք., Աստվածաշունչ Մատյանը, էջ 119:

¹¹⁹ Իշխանյան Ռ., Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը, Էջմիածին, 1966, էջ 142:

¹²⁰ Ազնավորյան Զարեհ արք., Աստվածաշունչի վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 163:

¹²¹ Ա Մնացորդացը՝ նախորդ Մնացորդաց:

¹²² Աստվածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց ներ պարունակող շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց, աշխ. Ոսկան վրդ. Երևանցի, Ամստերդամ, 1666, էջ 429:

Այս գրքերի թարգմանությունը կատարել է հենց ինքը Ռսկան վարդապետը: Ռսկանյան Աստվածաշնչում Նոր Կտակարանի գրքերից հետո տեղ են գտել Մանասեի աղոթքը և Դ Եզրասը, որոնք Հին Կտակարանին են պատկանում¹²³: Այս գրքերի տեղադրությունից կարելի է եզրակացնել, որ չնայած դրանք ընդգրկվել են Սուրբ Գրքում, այնուամենայնիվ դրանք կանոնական չեն համարվել: Այս լատինական ազդեցության հետևանքով առաջացան և՛ լեզվական¹²⁴, և՛ բնագրային թերություններ¹²⁵: Հայ իրականության մեջ առաջին անգամ հենց լատինական Աստվածաշնչի հետևողությամբ իրականացվեց Սուրբ Գրքի համարների և գլուխների բաժանումը:

Աստվածաշունչ երկրորդ անգամ տպագրվել է Պոլսում 1705 թվին Ռսկանի ազգական Պետրոս Լատինացու ջանքերով: Այն Ռսկան վարդապետի Աստվածաշնչի կրկնությունն է: Ռսկանյան Աստվածաշնչի արտատպությունն է նաև երրորդ տպագրությունը Վենետիկում, 1733 թվին Մխիթար աբբահոր կողմից¹²⁶:

Աստվածաշնչի հրատարակությունների մեջ հաջորդ հանգրվանը **Հովհաննես վարդապետ Զոհրապյանի** 1805 թվին հրատարակած Սուրբ Գիրքն է¹²⁷: Աստվածաշնչի հայկական դասական բնագրի քննական առաջին հրատարակությունը տեղի ունեցավ երկու տարբեր տպագրությամբ՝ միահատոր (մեծադիր) և քառահատոր (փոքրադիր)¹²⁸: Սա նոր փուլ է հայկական Աստվածաշնչի հրատարակության, որովհետև տպագրվել է գիտական հիմունքով. հիմնված է ոչ թե մի, այլ մեկից ավելի ձեռագրերի համեմատությամբ: Զոհրապյանը ձեռքի տակ ունեցել է 8 ընտիր ձեռագիր, ինչպես նաև Ռսկանյան տպագիր Աստվածաշունչը¹²⁹: Զոհրապյանի Աստվածաշունչը հիմնականում հիմնված է Գևորգ Սկևռացու ընդօրինակած ընտիր օրինակի վրա¹³⁰ և ունի հետևյալ կանոնը¹³¹.

¹²³ Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և Հայ մշակույթը, էջ 32:

¹²⁴ Տե՛ս Զամյան Մ., Պատմություն Հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1786, էջ 621:

¹²⁵ Տե՛ս Անասյան Հ., Աստվածաշունչ մատյան, էջ 338:

¹²⁶ Տե՛ս Մանուկյան Արտակ արք., Աստվածաշունչ Մատյանը, էջ 151-155, հմմտ. Ազնավորյան Զարեհ արք., Աստվածաշունչի վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 163-164:

¹²⁷ Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և Հայ մշակույթը, էջ 34:

¹²⁸ Անասյան Հ., Աստվածաշունչ մատյան, էջ 340:

¹²⁹ Մանուկյան Արտակ արք., Աստվածաշունչ Մատյանը, էջ 159:

¹³⁰ Ազնավորյան Զարեհ արք., Աստվածաշունչի վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 164:

¹³¹ Աստվածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, աշխ. Հովհաննես վրդ. Զոհրապյան, Վենետիկ, 1805, էջ 12:

Հին Կտակարան՝ Հնգամատյան, Դատավորաց, Հռութ, Ա-Դ Թագավորաց, Ա-Բ Մնացորդաց, Ա-Բ Եզրաս, Նեեմի Բանք Նեեմայ որդույ աքաղիայ, Եսթեր, Հուդիթ, Տոբիթ, Ա-Գ Մակաբայեցվոց, Սաղմոսաց, Առակաց, Ժողովող, Երգ երգոց, Սողոմոնի Իմաստություն, Հոբ, Եսայի, ԺԲ մարգարեններ, Երեմիա, Բարուք, Ողբ, Դանիել, Եզեկիել:

Նոր Կտակարան՝ Դ Ավետարան, Գործք Առաքելոց, Ընդհանրական նամակներ, Պողոսի ԺԲ նամակներ (Եբրայեցիսը՝ Թեսաղոնիկեցիներից հետո), Հայտնություն:

Հավելված՝ Սիրաք, Խոսք Սիրաքի, Գ Եզրաս, Աղոթք Մանասեի, Կորնթացիների նամակը Պողոսին, Հանգիստ Հովհաննու, Աղերս Եվթաղի:

Այս ցանկը խիստ հետաքրքրական է: Սովորաբար, չհաշված Տաթևացու ցանկը, կանոնի շեղումը կապված է լինում Հին Կտակարանին, այստեղ պարագան այլ է: Հին Կտակարանը ամբողջապես համընկնում է հունական կանոնին, միայն պակասում է Սիրաքի իմաստությունը, որը առանձնաբար Ձոհրաայանը հիշատակում է հավելվածում: Իսկ Նոր Կտակարանի կանոնում Գործքին հաջորդում են ոչ թե Պողոսի, այլ ընդհանրական նամակները, ինչպես տեսանք Շիրակացու, Այրիվանեցու և Տաթևացու հիշատակած կանոններում: Այստեղ Պողոս առաքյալի նամակների շարքում վերջինը Փիլիմոնինն է դրված: Եվ որ ամենահետաքրքրականն է՝ կա հավելված, որտեղ ներառված են կանոնից դուրս մնացած գրքերը:

Հաջորդ երկու տպագրությունները ևս կրկնում էին Ոսկան Երևանցուն:

Հատկանշական է Աստվածաշնչի յոթներորդ հրատարակությունը Արսեն Բագրատունու կողմից 1860 թվականին, Վենետիկում: Այս տպագրությունը Ձոհրաայանի հետևողությամբ է. կանոնը ևս նույն տեսքն ունի¹³²: Այս տպագրությունը առիթ եղավ, որ շրջանառությունից դուրս գա Ոսկանյան Աստվածաշունչը:

Հաջորդ կարևոր հանգրվանը 1892-ին եղավ, երբ Սուրբ Գրոց Ամերիկյան Ընկերությունը տպագրեց Աստվածաշունչը և ըստ իրենց հաստատած կանոնի դուրս թողնվեցին երկրորդականոն գրքերը: Ներսես Պատրիարք Վարժապետյանը ընդունեց Ընկերության պայմանը և Աստվածաշունչը տպագրվեց առանց երկրորդականոն գրքերի¹³³: Բայց սկսած 1960 թվից Սուրբ Գրոց Ընկերությունը փոխել է օրենքը և հանել արգելքը միջեկեղեցական գործակցության համար:

¹³² Մանուկյան Արտակ արք., Աստվածաշունչ Մատյանը, էջ 163:

¹³³ Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը, էջ 164:

Մյուս տպագրություններին առանձնաբար չենք անդրադառնում, քանի որ կանոնական առումով նորություններ չկան:

ԺԹ դարում, երբ արևելահայերենը իր խարիսխն էր գցում հայկական մշակույթի ծովում, կարիքը եղավ նաև Սուրբ Գրքի նոր թարգմանության և հրատարակության: Հայաստանի Աստվածաշնչային Ընկերության ջանքերով Սուրբ Էջմիածնում լույս տեսավ արևելահայերեն ամբողջական առաջին Աստվածաշունչը¹³⁴: Թարգմանությունը կատարվել է գրաբար բնագրից՝ համեմատությամբ ուրիշ թարգմանությունների: Այս Աստվածաշնչի կանոնը Հին Կտակարանի պարագայում համընկնում է Ջոհրապյան Աստվածաշնչի հինկտակարանյան կանոնին, միայն թե Սիրաքի իմաստությունը ավելանում է Սողոմոնի իմաստությունից հետո և նախորդում Հոբին: Իսկ Նոր Կտակարանի կանոնը ամբողջությամբ համընկնում է Ոսկանյան Աստվածաշնչի նորկտակարանյան կանոնին: Սակայն դժվար է ասել, թե ինչ սկզբունքով է այս կանոնը առաջացել, բայց փաստ է, որ լինելով հրատարակված քրիստոնյա Հայաստանի հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածնում, ստացել է պաշտոնական կարգավիճակ:

Նոր խմբագրությամբ արևելահայերեն Աստվածաշունչ լույս տեսավ ամենին վերջերս՝ 2017 թվականին, Հայաստանի Աստվածաշնչյան Ընկերության կողմից Սուրբ Էջմիածնում: Սակայն առանց առաջաբանի, առանց որևէ տեղեկության արված խմբագրության մասին: Կանոնի հարցում համընկնում է դրանից 10 տարի առաջ հրատարակված գրաբար Աստվածաշնչի կանոնին¹³⁵, որտեղ երկրորդականոն գրքերը առանձնացված են և դրված Հին Կտակարանի կանոնի վերջում: Միայն թե այստեղ երկրորդականոնները այլ հերթականություն ունեն: Ինչպես արդեն ասացինք, չկա առաջաբան, ուստի պատճառաբանված չէ երկրորդականոն գրքերի անջատումը կանոնից:

¹³⁴ Ազնավորյան Ջարեհ արք., Աստվածաշունչի վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 166-167:

¹³⁵ Տե՛ս Աստվածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, ՀԱԸ, 1997:

ԳԼՈՒԽ Գ. ԿԱՆՈՆԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Գ. 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Արևելյան ուղղափառ (օրիենտալ) ընտանիքը ընդգրկում է Հայ, Ասորի, Ղպտի, Եթովպական, Հնդիկ (Մալանկարա ասորի) և Էրիթրեական ուղղափառ եկեղեցիները: Սրանք այն եկեղեցիներն են, որոնք մերժել են քաղկեդոնի ժողովը¹³⁶, ինչի պատճառով էլ պատմականորեն անվանվել են ոչ-քաղկեդոնական, նախաքաղկեդոնական, մոնոֆիզիտ (միաբնակ) և հին արևելյան եկեղեցիներ: Այսօր այս եկեղեցիների համար լայնորեն ընդունված է Արևելյան ուղղափառ եկեղեցիներ անվանումը¹³⁷: Այս եկեղեցիները, չնայած իրենց դժվար և իրադարձություններով հարուստ պատմությանը, ունեն հարուստ աստվածաբանական, հոգևոր և եկեղեցական ժառանգություն¹³⁸: Արևելյան ուղղափառ եկեղեցիները հիմնվել են առաքելական ժամանակաշրջանում՝ կա՛մ անմիջապես առաքյալների, կա՛մ նրանց առաջին աշակերտների կողմից: Նրանց դավանանքը հիմնվում է առաջին երեք տիեզերաժողովների (Նիկեա 325 թ., Կոնստանդուպոլիս 381 թ., Եփեսոս 431 թ.) որոշումների վրա: Ալեքսանդրյան դպրոցն ուղղորդել և իր ազդեցությունն է թողել նրանց աստվածաբանական մոտեցման վրա, ս. Կյուրեղ Ալեքսանդրացու ուսմունքն էլ կազմում է նրանց քրիստոսաբանության հիմքը: Չնայած նրանց դեմ ուղղված բազմաթիվ մեղադրանքներին, նրանք միշտ ընդունել և հավատացել են, որ Քրիստոս մարդ էր և Աստված միաժամանակ¹³⁹: Նրանք խոստովանում են կյուրեղյան «մարմնացյալ Բանի մի բնություն» բանաձևը և աստվածաբանորեն անվանվում «միաֆիզիտներ»¹⁴⁰: Արևելյան ուղղափառ եկեղեցիները միմյանց հետ եկեղեցական հաղորդության մեջ են¹⁴¹:

¹³⁶ <http://www.pro-orient.at/Einfuehrung-orientalisch-orthodoxe-Kirchen> (10.05.2018).

¹³⁷ <https://www.oikoumene.org/en/church-families/orthodox-churches-oriental> (10.05.2018).

¹³⁸ Baum Wilhelm and Winkler Dietmar, *The Church of the East*, Preface, London, 2003, p. xi.

¹³⁹ Fr. Hawkes-Teeple Steven, *Eastern Christians and Their Churches, USA*, 2008, p. 16 (այսուհետ՝ Fr. Hawkes, *Eastern Christians and Their Churches*).

¹⁴⁰ *The Encyclopedia of Eastern Orthodox Christianity* (edited by John Anthony McGuckin), *Oriental Orthodox*, vol. 1, Wiley-Blackwell, 2010, p. 428 (այսուհետ՝ *The Encyclopedia of Eastern Orthodox Christianity*).

¹⁴¹ Bailey J. Betty and Martin J., *Who are the Christians in the Middle East?*, Cambridge, U. K., 2003, p. 66 (այսուհետ՝ Bailey B. Jane and J. Martin, *Who are the Christians in the Middle East?*).

Գ. 2. ԱՍՈՐԱԿԱՆ ՍՈՒՐԳՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԸ

Ասորական եկեղեցին հնագույնն է Արևելյան ուղղափառ եկեղեցիների շարքում¹⁴²: Ավանդության համաձայն, Պետրոս առաքյալն է համարվում Անտիոքի Եկեղեցու հիմնադիրը (37 թ.) և վերջինիս առաջին գահակալը¹⁴³: Անտիոքի գահին Պետրոսին հաջորդել է Իգնատիոս Անտիոքացին¹⁴⁴: Տեղին է նշելը, որ սիրիական Անտիոք քաղաքը մեկն էր քրիստոնեական աստվածաբանական կենտրոններից: Հենց Անտիոքում էր, որ առաջին անգամ հավատացյալները կոչվեցին քրիստոնյաներ (Գործք 11:26): Ասորական նշանավոր կենտրոններից էր Եդեսիան, որտեղ էլ, ըստ ավանդության, Թովմաս առաքյալի կողմից քարոզվեց քրիստոնեությունը¹⁴⁵: Ասորական եկեղեցու ձեռք հիմնված է Հակոբոս Տյառնեղբոր ավանդության վրա, որը Երուսաղեմի առաջին եպիսկոպոսն էր, իսկ ծիսական լեզուն դասական ասորերենն է¹⁴⁶: Ասորերենը համարվում է արամեերենի բարբառներից մեկը¹⁴⁷. ասորիները այն սուրբ են համարում, քանի որ դրանով երբևէ խոսել է Քրիստոս¹⁴⁸: Ասորական տառերը ստեղծվել են Ա դարի առաջին կեսին: Ասորերենը ունի 22 տառ, որոնց հերթականությունը համապատասխանում է եբրայերենին: Սիրիական գրականությունը շատ կարևոր է քրիստոնեության համար, այն իմաստով, որ բաղկացած է բացառապես բնօրինակ փաստաթղթերից¹⁴⁹: Այստեղ էլ մեծ թափ առավ նորկտակարանյան տեքստերի ասորերեն թարգմանության գործը, որը տարածվեց նաև ասորալեզու այլ համայնքներում: Քրիստոնեության վաղագույն ճյուղերից և ոչ մեկում Նոր Կտակարանի այդքան թարգմանություններ չեն կատարվել, որքան ասորալեզու համայնքներում: Սուրբ Գրքի ասորերեն թարգմանությունն ամենահինն է հունարենից հետո¹⁵⁰, թարգմանված է բնագրից: Հին Կտակարանը թարգմանվել է Ա դարում, իսկ Նորը՝ Բ դարում: Ասորական ավանդությունն ասում է, որ այս թարգմանությունն արված է Աբգար թագավորի և Ադդե առաքյալի ժամանակ, բայց

¹⁴² Bliss E. Munsell, *Turkey and The Armenian Atrocities, Other Oriental Churches*, Philadelphia, 1896, p. 145.

¹⁴³ <https://www.oikoumene.org/en/member-churches/syrian-orthodox-patriarchate-of-antioch-and-all-the-east> (28.04.18).

¹⁴⁴ <http://syrianorthodoxchurch.org/general-history/> (28.04.18).

¹⁴⁵ Տե՛ս The Encyclopedia of Eastern Orthodox Christianity, p. 586.

¹⁴⁶ Bailey B. Jane and J. Martin, *Who are the Christians in the Middle East?*, p. 76.

¹⁴⁷ Fr. Hawkes-Teeple Steven, *Eastern Christians and Their Churches*, p. 7.

¹⁴⁸ http://www.pro-orient.at/Syrisch_Orthodoxe_Kirche/ (28.04.18).

¹⁴⁹ *The Cambridge History of the Bible*, vol. 1, *From the beginnings to Jerome*, Cambridge, 1970, p. 24 (այսուհետ՝ *The Cambridge History of the Bible*, vol. 1).

¹⁵⁰ Արշակ Տեր-Միքելյան, Ուսումն Սուրբ Գրոց, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2016, Բ հրատ., էջ 118:

այս մասին վավերական տեղեկություններ չկան¹⁵¹: Խոսելով ասորական թարգմանությունից, պիտի ասենք, որ եղել են տարբեր թարգմանություններ: Մեզ հայտնի են ասորերեն հետնյալ 4 թարգմանությունները¹⁵²

Ա. Հին ասորերեն թարգմանություն

Բ. Պեշիթո (Հին ասորերեն թարգմանությունների բազմազանության մեջ մեկ հեղինակավոր տեքստ ունենալու համար Ե դարի սկզբին ստեղծվում է Պեշիթո թարգմանությունը: Այն ավանդաբար վերագրվում է Եդեսիայի եպիսկոպոս Ռաբբուլասին (411-431): Թարգմանությունը բովանդակում է Նոր Կտակարանի միայն 22 գրքերը (բացակայում են Պետրոսի Բ, Հովհաննեսի Բ և Գ, Հուդայի նամակները, և Հովհաննու Հայտնությունը))

Գ. Փիլոքսենյան կամ Հերակլյան թարգմանություն (Պեշիթոյի վերանայումն էր, որտեղ Նոր Կտակարանի ցանկում ավելանում են 4 ընդհանրական նամակները և Հովհաննու Հայտնությունը)

Դ. Ասորա-Պաղեստինյան թարգմանություն (թարգմանության լեզուն Պաղեստինի ասորական բարբառն էր, որը բավական մոտ էր արամեերենին, որով խոսում էր հենց ինքը՝ Քրիստոս)

Այս թարգմանություններից վավերական ճանաչվեց Պեշիթոն, որ նշանակում է պարզ կամ բառացի: Պեշիթոն նշանավոր է իր բնագրին ունեցած հարազատությամբ և բովանդակում է նաև Նոր Կտակարանը: Այստեղ հետաքրքրական է այն հանգամանքը, որ դեռ 160-ական թվականներին կար ասորերենով քառավետարանի թարգմանությունը՝ Դիատեսսարոնը, որը երկար ժամանակ գործածվում էր՝ չնայած իր ուղղափառ չլինելուն¹⁵³: Սուրբգրային նախնական թարգմանության ժամանակ և՛ հինկտակարանյան, և՛ նորկտակարանյան գրքերից դուրս մնացին 5-ական գրքեր¹⁵⁴:

Հին Կտակարանից՝ Ա-Բ Մնացորդաց, Եզր, Նեեմի և Եսթեր:

Նոր Կտակարանից՝ Բ Պետրոս, Բ-Գ Հովհաննես, Հուդա, Հայտնություն:

¹⁵¹ Մանուկյան Արտակ արք., Աստվածաշունչ Մատյանը, Թեհրան, 1995, էջ 58:

¹⁵² Եզնիկ արքեպս. Պետրոսյան, Նոր Կտակարանի Ներածություն, ՀԱԸ, Երևան, 2016, Գ տպագրություն, էջ 29-30:

¹⁵³ Տեր-Մինասյան Երվանդ, Հայոց Եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 2009, էջ 15, հմմտ. Պետրոսյան Եզնիկ արք., Հայրաբանություն, Երևան, 2017, էջ 90-91:

¹⁵⁴ Ազնավորյան Զարեհ արք., Աստվածաշունչին վերաբերյալ ուսումնասիրություններ, էջ 140:

Խոսելով ասորական կանոնի մասին, պիտի ասենք, որ Հին Կտակարանի կանոնի սահմանները, ինչպես և դրանում առկա գրքերի դասավորության կարգը ասորական ավանդության մեջ միանշանակ որոշելն անհնար է: Ասորական կանոնը բացահայտելու գործում կարելի է որպես ուղեցույց ընտրել Հունիլիոս Աֆրիկացու (Չ դար) գրվածքը՝ «Ուղեցույց սուրբգրային ընթերցանության» (Instituta regularia divinae legis), որը, ըստ երևույթին, ցույց է տալիս Կանոնն ըստ Մծբինի դպրոցի՝ Չ դարի սկզբներին¹⁵⁵: Ըստ այս կանոնի՝

Կանոնական են՝ Հնգամատյանը, Հեսու Նավեն, Դատավորացը, Հռութը, Ա-Դ Թագավորացը, Սաղմոսացը, 12 փոքր մարգարեները, Եսային, Երեմիան, Եզեկիելը, Դանիելը, Սողոմոնի Առակացը, Հեսուի՝ Սիրաքի որդու իմաստությունը և Ժողովողը:

Ոչ կանոնական են՝ Ա-Բ Մնացորդացը, Հոբը, Տոբիթը, Եզրաս-Նեեմի, Հուդիթը, Եսթերը, Ա-Բ Մակաբայեցիսը և Սողոմոնի Երգ երգոցը: Այս գրքերի կանոնից դուրս մղումը կարող է կապված լինել Մծբինի դպրոցի նշանավոր ներկայացուցիչ Թովմա Մովսուեստացու տեսակետի հետ, որի հիման վրա Անտիոքի եկեղեցին կանոնում չի ներառում վերոնշյալ գրքերը:

Բայց այս կանոնը այնքան էլ միօրինակ չէ, որովհետև կան ասորական կողերսներ, որոնք պարունակում են նաև վերոնշյալ ցանկին չպատկանող գրքեր: Այդպիսի հնագույն կողերսներից մեկը պահպանված Միլանում (Է դար), պարունակում է Երեմիայի նամակը, Բարուքը, Դանիելի հավելումները, ինչպես նաև՝ Բարուքի հայտնությունը (Բ Բարուք), Եզրի հայտնություն (Գ Եզրաս՝ Ուղղափառ ավանդության մեջ առանց Ա, Բ և ԺԵ, ԺԶ գլուխների), Գ և Դ Մակաբայեցվոցը, ինչպես նաև Հովսեփոս Փլավիոսի «Հրեական պատերազմներ» աշխատության Զ գիրքը: Այստեղ բացառիկ են Եզրասի հայտնությունը և «Հրեական պատերազմները», որովհետև ավելի ուշ շրջանի ասորական սուրբգրային ցանկերում այլևս այս գրքերը չեն հիշատակվում: Իսկ Տոբիթի կանոնում չլինելը բացատրվում է դրա կողերսում ամբողջական չլինելու հանգամանքով: Ասորական սուրբգրային որոշ ցանկերում ներառվում են Բ Եզրասը, Մանասեի աղոթքը, պարականոն սաղմոսները՝ 151-ից 155, որոնցից երկուսը հայտնի են միայն ասորերեն տարբերակով:

¹⁵⁵ http://www.pravenc.ru/text/1470227.html#part_33 (28.04.18).

Հետաքրքրական է նաև ասորական կանոնում հինկտակարանյան գրքերի դասավորության կարգը, որը տարբեր աղբյուրներում կարող է տարբեր լինել: Շատ հաճախ Հոբը կարող է հաջորդել անմիջապես Հնգամատյանին, ինչը կապված է բաբբունական ավանդության հետ, որի համաձայն, ինչպես Հնգամատյանի, այնպես էլ Հոբի հեղինակը Մովսեսն է: Հաճախ Սաղմոսացը տեղադրվում է Ա-Բ և Գ-Դ Թագավորաց գրքերի արանքում, ինչը միանշանակ կապված է գրքի հեղինակ Դավիթ արքայի հետ: Այլ ձեռագրերում առանձին բաժին է կազմվում, որը ներառում է Հռութը, Եսթերը, Հուդիթը, Շուշանի մասին պատմությունը, որոնք Բյունկենյան Աստվածաշնչում անվանվել են «Գրքեր փառահեղ կանանց մասին»: Կան անգամ առանձին ձեռագրեր նվիրված վերոնշյալ կանանց սուրբգրային գրքերին:

Նոր Կտակարանի պարագայում ընդունված է համարել, որ ասորական Նոր Կտակարանի կանոնը իր նախնական ձեռագիր ձևով սահմանել է ասորական ապոկրիֆ՝ «Ադդե առաքյալի ուսմունքը» (Դ դարի վերջ), որտեղ հանձնարարվում է կարդալ Օրենքը, Մարգարեներին, Ավետարանը, Պողոսի նամակները, Գործքը, իսկ դրանից բացի՝ ոչինչ: Ասորական կանոնի կարևոր յուրահատկություններից է այն, որ նորկտակարանյան կանոնական գրքերի շարքում մինչև Ե դար ներառվել են Կորնթացիներին ուղղված երրորդ նամակը, որից մեջբերումներ ունի Եփրեմ Ասորին, Ափրահատ Ասորին: Կան վկայություններ այն մասին, որ մինչև Ե դար Փիլիպեցիներին ուղղված նամակը ընդգրկված չէր ասորական կանոնում:

Դ դարի սկզբում, ասորական Աստվածաշունչը համաձայնեցվեց հունական ձեռագրերին շնորհիվ Փիլոքսենոս Մաբուգացու, որից հետո արևմտյան ասորիները (հակոբիկյաններ) նորկտակարանյան կանոնում ընդունեցին 27 գրքերը՝ ներառելով վերոնշյալ 5 գրքերը: Իսկ արևելյան ասորիները (նեստորականներ) մինչ օրս ընդունում են Նոր Կտակարանի 22 գրքերը, չնայած որոշ եկեղեցիներ թույլատրում են գործածել 5 ոչ կանոնական գրքերը¹⁵⁶: Ասորական կանոնն է որդեգրել նաև Մալանկարա եկեղեցին, որը հիմնվել է 1912 թվականին¹⁵⁷:

¹⁵⁶ http://www.pravenc.ru/text/1470227.html#part_33 (28.04.18).

¹⁵⁷ http://mosc.in/the_church/the-malankara-orthodox-syrian-church (09.05.18).

Գ. 3. ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԸ

Քրիստոնեության առաջին դարերում արդեն իսկ բազմաթիվ քրիստոնյաներ կային Եգիպտոսում: Ըստ ավանդության, Ղպտի եկեղեցու հիմնադիր համարվում է Մարկոս ավետարանիչը¹⁵⁸: Գ դարում Եգիպտոսը հայտնի էր իր վանականությամբ, որտեղ բազմաթիվ եպիսկոպոսական աթոռներ կային: Եգիպտոսում էր Ալեքսանդրիայի նշանավոր գրադարանն ու դպրոցը, որը քրիստոնեական ուսուցման կենտրոնն էր համարվում¹⁵⁹: Այս նույն Ալեքսանդրիան եղավ նաև Ղպտի եկեղեցու կենտրոնը¹⁶⁰: Քրիստոնեությունը այստեղ որպես պետական կրոն ընդունվել է 313 թվականին: Այսօր Ղպտի եկեղեցին Մերձավոր Արևելքի մեծագույն եկեղեցին է և ունի ավելի քան 10 մլն. հավատացյալ¹⁶¹: Քույր եկեղեցիների մասին խոսելով, կարևոր է փաստել, որ մինչև վերջերս Եթովպիայի ուղղափառ եկեղեցին գտնվում էր Ղպտի եկեղեցու հոգևոր ենթակայության ներքո¹⁶²:

Ղպտի տերմինը առաջացել է հունարեն «αἴγυπτος» բառից, որը համարժեք է Եգիպտոսին¹⁶³: Ղպտերենը եգիպտական լեզվի վերջին փուլն է: Մինչ ԺԷ դար դպտերենը եղել է խոսակցական և գրավոր լեզու, ինչից հետո պահպանվել՝ միայն որպես ծիսական լեզու¹⁶⁴: Ղպտերենն ունի 32 տառ, որոնցից 25-ը համապատասխանաբար վերցված են հունարենից¹⁶⁵, իսկ մնացածը բուն եգիպտական տառեր են: Ավանդության համաձայն, Ալեքսանդրիայի դպրոցի հիմնադիր Պանտենոսը¹⁶⁶ և Կղեմես Ալեքսանդրացին¹⁶⁷ են ստեղծել այս դպտերենը, որով էլ առաջին անգամ կատարել Սուրբ Գրքի ամբողջական թարգմանությունը դպտերենի¹⁶⁸:

¹⁵⁸ Գանձասար, Չ, Ղպտի եկեղեցի, Երևան, 1996, էջ 587:

¹⁵⁹ Bailey B. Jane and J. Martin, Who are the Christians in the Middle East?, p. 73.

¹⁶⁰ Fr. Hawkes, Eastern Christians and Their Churches, p. 6.

¹⁶¹ http://www.pro-orient.at/Koptisch_Orthodoxe_Kirche/ (10.05.18).

¹⁶² Տեղեկություններ Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններին մասնակցելու համար Հայաստան ժամանած պատվիրակությունների եկեղեցիների մասին, կազմող՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժին, Արևելյան-ուղղափառ եկեղեցիներ, Սբ. Էջմիածին, 2001, էջ 4 (այսուհետ՝ Արևելյան-ուղղափառ եկեղեցիներ, Սբ. Էջմիածին):

¹⁶³ Fr. Tadros Y. Malaty, Coptic Orthodox Church, Egypt, 1993, p. 8.

¹⁶⁴ The Cambridge History of the Bible, vol. 1, p. 27.

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 28:

¹⁶⁶ Տե՛ս The Encyclopedia of Eastern Orthodox Christianity, Coptic Orthodoxy, p. 153.

¹⁶⁷ Տե՛ս Պետրոսյան Եզնիկ արք., Հայրաբանություն, Երևան, 2017, էջ 136-150, հմմտ. Մեննդրոֆ Ի., Ներածություն հայրախոսական աստվածաբանության, Սբ. Էջմիածին, 2013, էջ 120-135:

¹⁶⁸ Iris Habib el Masri, The Story of the Copts, Book 1, USA, 1975, p. 32.

Ղպտերենը Բ դարում տարածվել էր գրեթե ամբողջ Եգիպտոսում. նորադարձ քրիստոնյաները հունարեն չգիտեին, հետնաբար անհրաժեշտ նկատվեց Ս.Գրքի թարգմանությունը, մանավանդ Վերին Եգիպտոսում¹⁶⁹: Բայց ղպտերենը միաձև չէր և տեղական բազմաթիվ բաժանումներ և տեղային բարբառներ կային. գավառից գավառ լեզուն կրում էր զգալի փոփոխություններ: Հիշատակվում են չորս հիմնական բաժանումները.

Ա. Սահետական (Թեբեի շրջան, որ Վերին Եգիպտոսի բարբառն էր)

Բ. Բոհարիական (Ստորին Եգիպտոս և Ալեքսանդրիա)

Գ. Աքիմենյան

Դ. Ֆաբյումական (Կենտրոնական Եգիպտոս)

Չնայած որ հենց այստեղ էր կատարվել Սուրբ Գրքի Յոթանասնից թարգմանությունը¹⁷⁰, բայց անհրաժեշտություն առաջացավ Սուրբ Գիրքն ունենալու 4 թարգմանություններով: Դ դարում ձեռնարկվեց այս աշխատանքը, ինչի արդյունքում արված թարգմանություններից լավագույնը դարձավ Բոհարիականը՝ կատարված Գ դարի առաջին կեսին: Ամենավաղ թարգմանությունը համարվում է Սահետականը՝ արված Բ դարի վերջին: Տեղին է նշել, որ վերոնշյալ բոլոր թարգմանությունները կատարվել են հունարենից՝ հնարավոր հարազատությամբ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ ղպտական գրականությունը խիստ հոգևոր է. հունարենից կատարվել են ինչպես Աստվածաշնչի, այնպես էլ պարականոն գրքերի, սրբերի վարքերի թարգմանություններ: Այս պատճառով էլ ղպտերենը հազեցած է հունաբանություններով, հատկապես այն ոլորտներում, որտեղ կան քրիստոնեությանը առնչվող վարդապետական և ծիսական տարրեր:

Խոսելով կանոնի մասին, պիտի ասենք, որ չնայած Սուրբ Աթանասի 39-րդ տոնական նամակը շատ արագ թարգմանվել է ղպտերեն, բայցևայնպես Ղպտի եկեղեցում ավելի մեծ հեղինակություն ուներ և որպես կանոնական գրքերի ցուցակ օգտագործվում էր «Առաքելական Կանոնները»: Սակայն այս ցուցակի ձեռագրական ավանդույթը ղպտերենում և արաբերենում ունի բազմազան տարբերակներ: Ամենատարածվածներից մեկը ունի հետևյալ տեսքը՝

¹⁶⁹ Արտակ արքեպս. Մանուկյան, Աստվածաշունչ մատյանը, էջ 66:

¹⁷⁰ Գալայան Ա., Նոր Կտակարանի ընդհանուր ներածություն, Հայաստան, 2003, էջ 54:

Հին Կտակարան՝ Հնգամատյան, Հեսու Նավե, Դատավորներ, Հռութ, Ա-Դ Թագավորներ, Ա-Բ Մնացորդաց, Բ Եզրաս (2 գիրք՝ հավանաբար Նեեմի), Հուդիթ, Տոբիթ, Հոբ, Սաղմոսներ (**ներառյալ 151-րդ սաղմոսը**), Սողոմոնի Առակներ, Ժողովող, Սողոմոնի Երգ երգոց, 12 փոքր մարգարեներ, 4 մեծ մարգարեներ, Սողոմոնի իմաստություն, Եսթեր, Ա-Գ Մակաբայեցիներ, Հեսուի՝ Սիրաքի որդու իմաստություն:

Նոր Կտակարան՝ Դ Ավետարան, Գործք, Ընդհանրական նամակներ (Ա-Բ Պետր., Ա-Գ Հովհ., Հակ., Հուդա), Պողոսի 14 նամակներ, Հովհաննու հայտնություն, **Կղեմեսի 2 նամակներ**:

Ընդհանուր հաշվով.

Հին Կտակարան՝ 45 գիրք,

Նոր Կտակարան՝ 29:

Այս նույն գրքերը հաճախ այլ դասավորությամբ են հանդիպում այլ ձեռագրերում: Ղպտական ավանդության մեջ լայնորեն տարածված է այն միտքը, որ Աստվածաշնչի բոլոր գրքերը 81-ն են, բայց թե որ գրքերն են մտնում այս ցանկի մեջ, երբևէ չի եղել հստակեցված¹⁷¹:

Այսօր ղպտական կանոնում Նոր Կտակարանը ամբողջությամբ համապատասխանում է հունական կանոնին, իսկ հինը՝ եբրայական կանոնին, միայն թե գրքերի տարբեր դասավորությամբ¹⁷²:

Ցանկը ներկայացնում ենք ստորև.

¹⁷¹ http://www.pravenc.ru/text/1470227.html#part_33 (28.04.2018).

¹⁷² <http://www.copticchurch.net/cgi-bin/bible/> (13.05.2018).

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

1.	Ծննդոց	21.	Ժողովող
2.	Ելք	22.	Երգ երգոց
3.	Ղևտական	23.	Եսայի
4.	Թվեր	24.	Երեմիա
5.	Երկրորդ Օրենք	25.	Ողբ
6.	Հեսու	26.	Եզեկիել
7.	Դատավորներ	27.	Դանիել
8.	Հռութ	28.	Օսեե
9.	Սամուել Ա	29.	Հովել
10.	Սամուել Բ	30.	Ամոս
11.	Թագավորաց Ա	31.	Աբդիու
12.	Թագավորաց Բ	32.	Հովնան
13.	Մնացորդաց Ա	33.	Միքիա
14.	Մնացորդաց Բ	34.	Նավում
15.	Եզրաս	35.	Ամբակում
16.	Նեեմի	36.	Մովսեսի
17.	Եսթեր	37.	Անգե
18.	Հոբ	38.	Զաքարիա
19.	Սաղմոսաց	39.	Մաղաքիա
20.	Առակաց		

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

1.	Մատթեոս	15.	Տիմոթեոս Ա
2.	Մարկոս	16.	Տիմոթեոս Բ
3.	Ղուկաս	17.	Տիտոս
4.	Հովհաննես	18.	Փիլիմոն
5.	Գործք	19.	Եբրայեցիս
6.	Հռոմեացիս	20.	Հակոբոս
7.	Կորնթացիս Ա	21.	Պետրոս Ա
8.	Կորնթացիս Բ	22.	Պետրոս Բ
9.	Գաղատացիս	23.	Հովհաննես Ա
10.	Եփեսացիս	24.	Հովհաննես Բ
11.	Փիլիպեցիս	25.	Հովհաննես Գ
12.	Կողոսացիս	26.	Հուդա
13.	Թեսաղոնիկեցիս Ա	27.	Հայտնություն
14.	Թեսաղոնիկեցիս Բ		

Գ. 4. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵԹՈՎՊԱԿԱՆ ԿԱՆՈՆԸ

Եթովպիան Աֆրիկայի՝ քրիստոնեություն ընդունած ընդարձակ տարածաշրջաններից միակ պետությունն է, որը մինչև օրս պահպանել է իր քրիստոնեական դեմքն ու ինքնությունությունը¹⁷³: Եթովպական ուղղափառ եկեղեցին կոչվում է Թևահեդո (Թևահեդո թարգմանաբար նշանակում է միություն, որը խորհրդանշում է Քրիստոսի անձում մարդկային և աստվածային բնությունների միությունը)¹⁷⁴: Ըստ ավանդության, Եթովպիայում քրիստոնեության քարոզիչն է եղել Փիլիպպոս առաքյալի կողմից մկրտված եթովպացի ներքինին (Գործք Ը)¹⁷⁵: Այստեղ իր քարոզչական ճանապարհորդությունների ընթացքում եղել է նաև Մատթեոս առաքյալը: Քրիստոնությունը որպես պետական կրոն Եթովպիայում ընդունվել է 332 թվականին¹⁷⁶: Եթովպական ուղղափառ եկեղեցին յուրօրինակ է, քանի որ որդեգրել է այնպիսի հրեական ավանդույթներ, ինչպիսիք են թլպատությունը, հրեական պահքի կանոնները, շաբաթը պահելը¹⁷⁷: Քրիստոնեությունը Եթովպիայում քարացել է Դ դարում Փրոմանոսի և Ատեսիոսի շնորհիվ: Եթովպական ավանդությունը հենց այս երկու քարոզիչներին է վերագրում Ս. Գրքի թարգմանությունը, բայց իրականության մեջ թարգմանությունը վերջնական ձևավորում է ստացել նրանց մահվանից հետո¹⁷⁸: Բացի դրանից, յուրաքանչյուր գիրք մյուսից տարբերվում է իր ոճով, ինչը տարբեր հեղինակների կողմից թարգմանված լինելու ապացույց է: Թարգմանական գրականության մասին խոսելիս պիտի նշենք Դ դարը, որի առաջին քառորդին էլ առաջացել են եթովպական տառերը հարավսեմական այբուբենից: Եթովպերենը ունի 26 տառ, որից 24-ը վերցված են հարավսեմական սաբբայական տառերից: Դ դարում ասորի միսիոներների քարոզելու ժամանակ է, որ Եթովպիայում տարածվեց գրականությունը, ի մասնավորի՝ հոգևոր գրականությունը: Հոգևոր գրականությունը վերածվեց եթովպերենի հիմնականում հունարենից և ղպտերենից: Ծիսական լեզուն Եթովպիայում համարվում է Գեեզը: Սուրբ Գրքի թարգմանությունը կատարվել է հունարենից: Հետագայում թարգմանությունը

¹⁷³ Գանձասար, Ե, Եթովպական եկեղեցի, Երևան, 2002, էջ 495:

¹⁷⁴ http://www.pro-oriente.at/Aethiopisch_Orthodoxe_Kirche/ (10.05.18).

¹⁷⁵ <https://www.oikoumene.org/en/member-churches/ethiopian-orthodox-tewahedo-church> (13.05.18).

¹⁷⁶ Արևելյան-ուղղափառ եկեղեցիներ, Սբ. Էջմիածին, էջ 8:

¹⁷⁷ Fr. Hawkes, Eastern Christians and Their Churches, p. 12.

¹⁷⁸ Արտակ արքեպս. Մանուկյան, Աստվածաշունչ մատյանը, էջ 66:

վերանայվել է, թարմացվել և ենթարկվելով փոփոխությունների՝ կորցրել է նախնական տեսքը: Մեզ հասած հնագույն եթովպերեն ձեռագիրը պատկանում է ԺԳ դարին:

Խոսելով կանոնի մասին, պիտի ասենք, որ եթովպական սուրբգրային կանոնը տարբերվում է ցանկացած այլ եկեղեցու կանոնից¹⁷⁹: Յուրահատուկ և հետաքրքրական է Հին Կտակարանի եթովպական թարգմանությունը: Այստեղ 2 գրքեր՝ Ենովքը և Հոբեյանների գիրքը ամբողջությամբ պահպանվել են դասական եթովպերենով¹⁸⁰: Եթովպիայում կանոնական գրքերի հարցը ավանդության մեջ երբեք մանրամասնորեն չի քննարկվել: Կա կարծիք, թե «Սուրբգրային կանոն» հասկացությունը խորթ է այս ավանդությանը, իսկ այլ կարծիքի համաձայն, պետք է խոսել «լայն» (որը ներառում է առավել հեղինակավոր տեքստեր, այդ թվում և ոչ սուրբգրային) և «նեղ» (որում ներկայացվում է ձեռագիր և տպագիր Աստվածաշնչի հրատարակությունները) կանոնների մասին¹⁸¹: «Լայն» կանոնը վերցված է դպտիների կանոնի մասին ունեցած պատկերացումից, որը պարունակում էր 81 գիրք, որից 46-ը՝ հինկտակարանյան, իսկ 35-ը՝ նորկտակարանյան¹⁸²: Այս կանոնը սկզբնական շրջանում ուներ հետևյալ տեսքը.

Հին Կտակարան՝ Ութամատյան (եթովպացիների մոտ այն իրենով ներակայացնում էր մի ամբողջություն, որը ներառում էր Ծննդոցից մինչև Հուրթ եղած գրքերը), Հուդիթ, Ա-Բ Սամուել, Ա-Բ Թագավորաց, Ա-Բ Մնացորդաց, Ա Եզրաս, **Այլ Եզրաս** (Եզրասի հայտնություն), Եսթեր, Տոբիթ, Ա-Բ Սակաբակեցիներ, Հոբ, Սաղմոսաց, Առակաց Սողոմոնի, 16 Մարգարեներ (4 մեծ, 12 փոքր), Ժողովող, **Կորոնի որդի Հովսեփի գիրք**, **Ծնունդների գիրք**, **Ենովք**:

Նոր Կտակարան՝ Դ Ավետարան, Գործք, Ընդհանրական նամակներ, Պողոսի 14 թղթեր, Հովհաննու հայտնություն, **Մինողոս** (Ծիսական-կանոնական հուշարձան՝ բաղկացած 4 մասից), **Կտակարանի գիրք** (ևս մի ծիսական-կանոնական հուշարձան՝ Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի կտակարանը՝ բաղկացած 2 մասից), **Կղեմեսի 2 նամակներ**, **Եթովպական դիդասկալիա**:

¹⁷⁹ <http://www.ethiopianorthodox.org/english/canonical/books.html> (14.05.18).

¹⁸⁰ The Cambridge History of the Bible, vol. 1, p. 28:

¹⁸¹ St' u Cowley R. W., The Biblical Canon Of The Ethiopian Orthodox Church Today, 1974, Volume 23, p. 318-323.

¹⁸² St' u Cherenet Abebe, Foundational Bible Study, Addis Abeba, 2011, p. 91-92, 162-163.

Պիտի ասենք, որ այս նույն գրքերը հաճախ տարբեր ձեռագրերում տարբեր դասավորությամբ են հանդիպում և որ կան հաշվարկների այլ տարբերակներ (օրինակ՝ Առակացը բաժանվում է երկու մասի ևն): Հստակ է այն, որ Եթովպական եկեղեցում ի սկզբանե ընդունվել են միայն այն գրքերը, որոնք կանոնական են եղել դպտական, ասորական և հուդայական ավանդություններում: Վերջին շրջանում Աստվածաշնչի Ամհարական հրատարակություններում փորձ է արվում նեղացնել Հին Կտակարանը՝ այն ներկայացնելով 39, երբեմն էլ 40 գրքերով (եթե միայն Առակաց գիրքը բաժանվի երկու մասի): Այս հաշվարկով Մանասեի աղոթքն ավելանում է Բ Մակաբայեցիներին, Բարուքը ավելանում է Երեմիայի մարգարեությանը, Շուշանը՝ որպես հավելում Դանիելի մարգարեությանը, Գ Մակաբայեցիների գիրքը հաճախ մտնում է Բ մակաբայեցիների կազմում և այլն:

Եթովպական կանոնն այսօր ունի հետևյալ տեսքը.¹⁸³

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

1. Ծննդոց	21. Մակաբայեցիս Բ և Գ
2. Ելք	22. Հոբ
3. Ղևտական	23. Սաղմոսներ
4. Թվեր	24. Առակներ
5. Երկրորդ Օրենք	25. Tegsats (Reproof)
6. Հեսու	26. Metsihafe Tibeb (the books of wisdom)
7. Դատավորներ	27. Ժողովող
8. Հռութ	28. Երգ երգոց
9. Սամուել Ա և Բ	29. Եսայի
10. Թագավորաց Ա և Բ	30. Երեմիա
11. Մնացորդաց Ա	31. Եզեկիել
12. Մնացորդաց Բ	32. Դանիել
13. Հոբեյաններ ¹⁸⁴	33. Օսեե
14. Ենոք	34. Ամոս
15. Եզրաս-Նեեմի (Բ Եզրաս)	35. Միքիա
16. Եզրաս Բ (Գ) և Եզրաս Սուտուել (Դ)	36. Հովել
17. Տոբիթ	37. Աբդիու
18. Հուդիթ	38. Հովնան
19. Եսթեր	39. Նավում
20. Մակաբայեցիս Ա	40. Ամբակում

¹⁸³ <http://www.ethiopianorthodox.org/english/canonical/books.html> (15.05.18).

¹⁸⁴ Այս գիրքը, որ հայտնի է նաև որպես «Փոքր Ծննդոց», ամբողջովին պահպանվել է միայն եթովպական թարգմանությամբ:

41. Սոփոնիա
42. Անգե
43. Չաքարիա

44. Մաղաքիա
45. Հետուի որդի Սիրաքի գիրքը
46. Հովսեփի՝ Բենգորիոնի որդու գիրքը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- | | |
|---------------------|--------------------------------------|
| 1. Մատթեոս | 19. Եբրայեցիս |
| 2. Մարկոս | 20. Պետրոս Ա |
| 3. Ղուկաս | 21. Պետրոս Բ |
| 4. Հովհաննէս | 22. Հովհաննէս Ա |
| 5. Գործք | 23. Հովհաննէս Բ |
| 6. Հռոմեացիս | 24. Հովհաննէս Գ |
| 7. Կորնթացիս Ա | 25. Հակոբոս |
| 8. Կորնթացիս Բ | 26. Հուդա |
| 9. Գաղատացիս | 27. Հայտնություն |
| 10. Եփեսացիս | 28. Sirate Tsion (the book of order) |
| 11. Փիլիպեցիս | 29. Tizaz (the book of Herald) |
| 12. Կողոսացիս | 30. Gitsew |
| 13. Թեսաղոնիկեցիս Ա | 31. Abtilis |
| 14. Թեսաղոնիկեցիս Բ | 32. The I book of Dominos |
| 15. Տիմոթեոս Ա | 33. The II book of Dominos |
| 16. Տիմոթեոս Բ | 34. Կղեմեսի գիրքը |
| 17. Տիտոս | 35. Դիդասկալիա |
| 18. Փիլիմոն | |

Այս նույն կանոնն ունի նաև Էրիթրեայի Թևահեդո եկեղեցին: Էրիթրեական եկեղեցին անկախացել է Եթովպական եկեղեցուց 1993 թվականին: Իսկ Եթովպական եկեղեցին վերջնականապես անկախացել է 1959 թվականին. մինչ այդ, ինչպես արդեն ասել ենք, այն գտնվում էր Ղպտի եկեղեցու ազդեցության տակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի մի բերելով մեր աշխատանքը, հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

- Առակաց գրքի թարգմանության առաջինը լինելը պարզապես պատահականություն չէր, այլ խորապես մտածված կրթա-լուսավորչական ծրագիր:
- Վեր հանելով հայակական կանոնի մասին առկա բոլոր հիշատակությունները Ե դարի պատմիչ-հեղինակներից, տեսանք, որ Սուրբ Գրքի հայերեն թարգմանությամբ մեր հայրերը ընդօրինակել են նաև կանոնը. առաջին դեպքում՝ ասորական, երկրորդ դեպքում՝ հունական:
- Հայ իրականության մեջ սուրբգրային կանոնին առնչվող միակ ժողովական որոշումը՝ Պարտավի ժողովի ԻԴ կանոնը, չի կարող համարվել վավերական մի շարք պատճառներով, որոնք իր տեղում նշել ենք:
- Քննելով հայ իրականության մեջ առկա բոլոր ամբողջական կանոնները՝ մատնացույց արեցինք դրանց կանոնականության սահմաններն ասելով, որ առկա կանոնական ցանկերը, չնայած իրենց վրա մեծ ուշադրություն գրավելուն, այնուամենայնիվ չեն ներկայացնում եկեղեցու կանոնը, մանավանդ, որ դրանցից շատերը պահպանված են տարբեր օրինակներով և տարբեր բովանդակությամբ:
- Աստվածաշնչի հրատարակությունները ևս եկեղեցու պաշտոնական տեսակետ չէ, որ ներակայացնում են, այլ հրատարակողի անձնական ընտրությունը:
- Հայ եկեղեցին մեծապես ազդվել է ասորական կանոնից, ասորական կանոնից է ազդվել նաև Ղպտի եկեղեցին, վերջինից էլ իր հերթին Եթովպական եկեղեցին:
- Հայ եկեղեցին չունի սուրբգրային պաշտոնական կանոն և երբեք էլ չի ունեցել. այս հարցը կարոտ է նոր եկեղեցական ժողովով պարզաբանման:

Մենք լիահույս ենք, որ մեր աշխատությունը պիտի օգնի ապագայում հայկական կանոնը ուսումնասիրողներին, և մեր աշխատանքի նպատակն է բարձրաձայնել այն բացը, որ մեր եկեղեցին ունի Ե դարից մինչ օրս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

1. Աստվածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց ներ պարունակող շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց, աշխ. Ոսկան վրդ. Երևանցի, Ամստերդամ, 1666:
2. Աստվածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, ՀԱԸ, Ս. Էջմիածին 1997:
3. Աստվածաշունչ Մատյան Հին եւ Նոր Կտակարանների, ՀԱԸ, Ս. Էջմիածին 2017:
4. Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, աշխ. Հովհաննես վրդ. Զոհրապյան, Վենետիկ, 1805:
5. Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, հատոր 7, Պրակ 31, էջ 450-451:
6. Կորյուն, Վարք Մաշտցի, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի, Երևան, 1941:
7. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982:
8. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981:
9. Սարգիս վրդ. Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, Երուսաղէմ, 1998:

Հայալեզու

10. Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա., Հայոց Լեզվի պատմություն, ԵՊՀ, Երևան, 2017:
11. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Գիրք առաջին, Երևան, 1944:
12. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946:
13. Աբրահամյան Ա., Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:
14. Աբրահամյան Արման սրկ., Հին Կտակարանի կանոնը Հայ Եկեղեցու ավանդության մեջ, Ս. Էջմիածին, 2013:

15. Աբրահամյան Գ., Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956:
16. Ազնավուրյան Ջարեհ արք., Աստվածաշունչին վերաբերյալ ուսումնասիրություններ, խմբագրությամբ Վաղինակ վրդ. Մելոյանի, Անթիլաս, 2007:
17. Ալիշան Ղ., Յուշիկք Հայրենեաց Հայոց, Բ տպագրություն, Վենետիկ, 1921:
18. Ակինյան Ն., Դասական հայերենը և Վիեննական Միխթարյան դպրոցը, Վիեննա, 1932:
19. Աճառյան Հ., Հայոց Գրերը, Երևան, 1984:
20. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, ԵՊՀ, Երևան, 2013:
21. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, ԵՊՀ, Երևան, 2013:
22. Աճառյան Հ., Հայոց պատմություն (Հյուսված ընդհանուր պատմության հետ), ԵՊՀ, Երևան, 2004:
23. Աճեմյան Շահե արք., Հայերեն Աստվածաշունչը (հայագիտական ուսումնասիրություններ), Երևան, 2006:
24. Ամենայն հայոց կաթողիկոսներ (Հայ եկեղեցու հանրագիտարան), Պրակ Ա, Սբ. Էջմիածին, 2008:
25. Անասյան Հ., Անանուն կամ անվավեր գրքեր, Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ., հատոր Ա, Երևան, 1959:
26. Անասյան Հ., Աստվածաշունչ մատյան. Հայկական բնագիր, Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ., հատոր Բ, Երևան, 1976:
27. Ավգերյան Մկրտիչ, Ճելայյան Գրիգոր, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
28. Արևշատյան Ս., Մեսրոպ Մաշտոցի հոգևոր սխրանքը, Հայոց Գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2006:
29. Արշակ Տեր-Միքելյան, Ուսումն Սուրբ Գրոց, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2016:
30. Գայայան Ա., Նոր Կտակարանի ընդհանուր ներածություն, Հայաստան, 2003:
31. Գանձասար, Ե, Եթովպական եկեղեցի, Երևան, 2002:
32. Գանձասար, Զ, Ղպտի եկեղեցի, Երևան, 1996:

33. Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց. հայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը, Երևան, 1962:
34. Եկեղեցու հայերը և վարդապետները Սուրբ Մկրտության խորհրդի մասին, աշխատասիրությամբ Քյոսեյան Հակոբ, Երևան, 2015:
35. Իշխանյան Ռ., Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը, Էջմիածին, 1966:
36. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հատոր Բ, Երևան, 1971:
37. Հարությունյան Հ., Մխիթար Այրիվանեցի, Երևան, 1985:
38. Հովսեփյան Գարեգին արք., Մխիթար Այրիվանեցի, Նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931:
39. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 2006:
40. Ղանալայան Ա., Թե ինչո՞ւ Մաշտոցը թարգմանեց Սողոմոնի առակները, Բանբեր Մատենադարանի, № 7, Երևան, 1964:
41. Մայիլյան Վարդգես սրկ., Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու, գլուխ Գ, Ս. Էջմիածին, 2001:
42. Մանանդյան Հ., Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, Երևան, 1960, էջ 246:
43. Մատենագիրք Հայոց, Է դար, հատոր Դ, Անթիլաս, 2005:
44. Մեենդորֆ Ի., Ներածություն հայրախոսական աստվածաբանության, Սբ. Էջմիածին, 2013:
45. Մելիք-Թանգյան Ներսես արք., Հայ Եկեղեցական Իրավունքը, Բ հրատ., Ս. Էջմիածին, 2009:
46. Ներսեսյան Ներսես ավ. քին., Աստվածաշունչը և հայ մշակույթը, ՀԱԸ, 2001:
47. Շամյան Դանիել վրդ., Սուրբ Գրոց կանոնական և երկրորդականոն գիրքերը, «Միոն», փետրվար-մարտ, 1966:
48. Չամչյան Մ., Պատմություն Հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1786:
49. Պետրոսյան Եզնիկ արք., Հայրաբանություն, Երևան, 2017:
50. Պետրոսյան Եզնիկ արք., Նոր Կտակարանի Ներածություն, ՀԱԸ, Երևան, 2016:
51. Պողարյան Ն., Պարտավի ժողովին կանոններուն վերջին յօդուածը, «Միոն», 1944:

52. Սեքուլյա Օ., Նոր Կտակարանի գրքերու կարգը հայոց քով, Վիեննա, 1949:
53. Վեբեր Ս., Ս. Գրոց յարգն ու արժէքը հին հայոց քով, «Հանդէս ամսօրեայ», 1897:
54. Տեղեկություններ Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններին մասնակցելու համար Հայաստան ժամանած պատվիրակությունների եկեղեցիների մասին, կազմող՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժին, Արևելյան-ուղղափառ եկեղեցիներ, Սբ. Էջմիածին, 2001:
55. Տեր-Մինասյան Երվ., Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին, Բանբեր Մատենադարանի, № 7, Երևան, 1964:
56. Տեր-Մինասյան Երվանդ, Հայոց Եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 2009:
57. Տեր-Պետրոսյան Լ., Հայ թարգմանական գրականության ընդհանուր բնութագիրը, Գիրք Ծննդոց (քննական բնագիր), աշխատասիրությամբ Ջեյթունյանի, Երևան, 1985:
58. Քյոսեյան Հ., Ներածություն Հայ եկեղեցական մատենագրության (անտիպ):
59. Օրմանյան Մաղաքիա արք., Ազգապատում, հատոր Ա, Սբ. Էջմիածին, 2001:
60. Ֆեհրաթյան Պ., Անանիա Շիրակացոյ անտիպ էջերէն, Հանդէս ամսօրեայ, 1908:

Օտարալեզու

61. Тер-Мовсесян Месроп, История перевода Библии на армянский язык, Санкт-Петербург, 1902 г..
62. Bailey J. Betty and Martin J. , Who are the Christians in the Middle East ?, Cambridge, U. K., 2003.
63. Baum Wilhelm and Winkler Dietmar, The Church of the East, Preface, London, 2003.
64. Bliss E. Munsell, Turkey and The Armenian Atrocities, Other Oriental Churches, Philadelphia, 1896.
65. Cherenet Abebe, Foundational Bible Study, Addis Abeba, 2011.
66. Conybeare F., Armenian Version of The Old Testament, The Armenian Church Heritage and Identity, New York City, 2001.

67. Cowley R. W., The Biblical Canon Of The Ethiopian Orthodox Church Today, 1974.
68. Fr. Hawkes-Teeples Steven, Eastern Christians and Their Churches, USA, 2008.
69. Fr. Tadros Y. Malaty, Coptic Orthodox Church, Egypt, 1993.
70. Iris Habib el Masri, The Story of the Copts, Book 1, USA, 1975.
71. Stone M., Armenian Canon Lists I – The Council of Partaw, Harward Theological preview, vol. 66, No 4, 1973.
72. Stone M., Armenian Canon Lists II – The Stichometry of Anania of Shirak (c. 615 - c. 690 C.E.), Harward Theological preview, vol. 68, No. 3/4, 1975.
73. Stone M., Armenian Canon Lists III – The Lists of Mechitar of Ayrivank, Harward Theological preview, vol. 69, No 3/4, 1976.
74. The Cambridge History of the Bible, vol. 1, From the beginnings to Jerome, Cambridge, 1970.
75. The Encyclopedia of Eastern Orthodox Christianity (edited by John Anthony McGuckin), Oriental Orthodox, Vol. 1, Wiley-Blackwell, 2010.
76. Voobus A., Early Versions of New Testament, Manuscripts Studies, Stokholm, 1954.

Էլեկտրոնային աղբյուրներ

77. http://mosc.in/the_church/the-malankara-orthodox-syrian-church
78. <http://syrianorthodoxchurch.org/general-history/>
79. <http://www.copticchurch.net/cgibin/bible/>
80. <http://www.ethiopianorthodox.org/english/canonical/books.html>
81. http://www.pravenc.ru/text/1470227.html#part_33
82. <http://www.pro-oriente.at/Einfuehrung-orientalisch-orthodoxe-Kirchen>
83. <http://www.tewahdo.org/-protocol-between-the-coptic-orthodox-church-and-the-eritrean-orthodox-church>
84. <https://www.oikoumene.org/en/church-families/orthodox-churches-oriental>

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ

Է դար (Շիրակացի)	Ը դար (Պարտավ)	ԺԲ դար (Ս. Շնորհալի)
Հին Կտակարան		
Ծննդոց	Ծննդոց	Արարածոց
Ելից	Ելից	Ելից
Ղևտական	Ղևտական	Թվոց
Թվոց	Թվոց	Ղևտական
Բ Օրինաց	Բ Օրինաց	Բ Օրենք
Հետու Նավե	Հետու Նավե	Հետու
Դատավորաց	Դատավորաց	Դատավորաց
Հռութ	Հռութ	Հռութ
Ա-Դ Թագավորաց	Ա-Դ Թագավորաց	Ա-Դ Թագավորաց
Ա-Բ Մնացորդաց	Ա-Բ Մնացորդաց	Սաղմոսաց
Ա-Դ Սակաբայեցիս	Եզրի 2 գրքերը (հավանաբար Բ Եզրաս, Նեեմի)	Առակաց
ԺԲ մարգարեներ	Հոբ	Ժողովող
Եսայի	Սաղմոսաց	Երգ երգոց
Երեմիա	Սողոմոնի 3 գրքերը (Առակաց, Երգ երգոց, Ժողովող)	Հոբ
Բարուք	ԺԲ մարգարեներ	Եսայի
Ողբ Երեմիայի	Եսայի	Եզեկիել
Երեմիայի նամակը	Երեմիա	Դանիել

Եզեկիել	Եզեկիել	Երեմիա
Դանիել	Դանիել	ԺԲ մարգարեներ
Սաղմոսաց	Սիրաք	Եզր
Առակաց	-	Ա-Բ Մնացորդաց
Ժողովող	-	Եսթեր
Երգ երգոց	-	Հուդիթ
Սողոմոնի իմաստություն	-	Մակարայեցվոց
Հոբ	-	Սիրաք
Սիրաք	-	Եզրաս
Ա-Բ Եզրաս	-	-
Եսթեր	-	-
Տոբիթ	-	-
Հուդիթ	-	-

Է դար (Շիրակացի)	ԺԳ դար (Այրիվանեցի)	ԺԴ դար (Տաթևացի)
Նոր Կտակարան		
Մատթեոս	Հովհաննես	Մատթեոս
Մարկոս	Մատթեոս	Մարկոս
Դուկաս	Մարկոս	Դուկաս
Հովհաննես	Դուկաս	Հովհաննես
Գործք Առաքելոց	Գործք Առաքելոց	Հայտնություն
Հակոբոս	Հակոբոս	Հանգիստ Հովհաննու
Ա-Բ Պետրոս	Ա-Բ Պետրոս	Գործք Առաքելոց
Ա-Գ Հովհաննես	Ա-Գ Հովհաննես	Հակոբոս

Հայտնություն	Հուդա	Ա-Բ Պետրոս
Հոռմեացիս	Աղերս Եվթաղի	Ա-Գ Հովհաննես
Ա-Բ Կորնթացիս	Հոռմեացիս	Հուդա
Գաղատացիս	Ա-Բ Կորնթացիս	Հոռմեացվոց
Եփեսացիս	Կորնթացիների թուղթ	Ա-Բ Կորնթացվոց
Փիլիպեցիս	Գ Կորնթացիս	Գաղատացվոց
Կողոսացիս	Գաղատացիս	Եփեսացվոց
Ա-Բ Թեսաղոնիկեցիս	Եփեսացիս	Փիլիպեցվոց
Եբրայեցիս	Փիլիպեցիս	Կողոսացվոց
Ա-Բ Տիմոթեոս	Կողոսացիս	Ա-Բ Թեսաղոնիկեցվոց
Տիտոս	Ա-Բ Թեսաղոնիկեցիս	Եբրայեցվոց
Փիլիմոն	Եբրայեցիս	Ա-Բ Տիմոթեոս
-	Ա-Բ Տիմոթեոս	Տիտոս
-	Տիտոս	Փիլիմոն
-	Փիլիմոն	Գ Կորնթացվոց
-	Հայտնություն	Թադեոս
-	Հանգիստ Հովհաննու	Հակոբի ընթերցում
-	-	Առաքելական Բ կանոններ
-	-	Հուստոսի խոսքերը
-	-	Դիոնիսիոս Արեոպագետի գիրքը
-	-	Պետրոս առաքյալի քարոզչությունը

Բ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ¹⁸⁵

Ոսկանյան (1666)	Զոհրապյան (1805)	ՀԱԸ 1994	ՀԱԸ 2017
Հին Կտակարան			
Ծննդոց			
Ելից			
Ղևտացվոց			
Թվոց			
Երկրորդումն Օրինաց			
Հետու			
Դատավորաց			
Հռութ			
Ա-Դ Թագավորաց			
Ա-Բ Մնացորդաց			
Ա-Բ Եզրաս			Եսթեր
Տոբիթ	Նեեմի		Բ Եզրաս
Հուդիթ	Եսթեր		Նեեմի
Եսթեր	Հուդիթ		Հոբ
Հոբ	Տոբիթ		Սաղմոսաց
Սաղմոսաց	Ա-Գ Մակաբայեցվոց		Առակաց
Առակաց	Սաղմոսաց		Ժողովող
Ժողովող	Առակաց		Երգ երգոց
Երգ երգոց	Ժողովող		Եսայի
Սողոմոնի Իմաստություն	Երգ երգոց		Երեմիա
Սիրաք	Սողոմոնի Իմաստություն		Ողբ
Եսայի	Հոբ	Սիրաք	Եզեկիել
Երեմիա	Եսայի	Հոբ	Դանիել
Բարուք	<u>Օվսե</u>	Եսայի	<u>Օսեե</u>

¹⁸⁵ Միննույն տողում ընդգծված գրքերը համընկնում են:

Եզեկիել	Ամոս	Օվսե	Հովել
Դանիել	Միքիա	Ամոս	
Օվսե	Հովել	Միքիա	Աբդիու
<u>Հովել</u>	Աբդիու	<u>Հովել</u>	Հովնան
Ամովս	Հովնան	Աբդիու	Միքիա
Աբդիու	<u>Նավում</u>	Հովնան	<u>Նավում</u>
Հովնան	<u>Ամբակում</u>	Նավում	<u>Ամբակում</u>
Միքիա	<u>Սոփոնիա</u>	Ամբակում	<u>Սոփոնիա</u>
Նավում	<u>Անգե</u>	Սոփոնիա	<u>Անգե</u>
Ամբակում	<u>Զաքարիա</u>	Անգե	<u>Զաքարիա</u>
Սոփոնիա	<u>Մաղաքիա</u>	Զաքարիա	<u>Մաղաքիա</u>
Անգե	Երեմիա	Մաղաքիա	Տոբիթ
Զաքարիա	Բարուք	Երեմիա	Հուդիթ
Մաղաքիա	Ողբ	Բարուք	Ա Եզրաս
Ա-Գ Մակարայեցվոց	Դանիել	Ողբ	Սողոմոնի իմաստություն
Գ-Դ Եզրաս	Եզեկիել	Դանիել	Սիրաք
-	-	Եզեկիել	Բարուք
-	-	-	Ա-Գ Մակարայեցվոց

Զոհրապյան	Ոսկանյան	ՀԱԸ 1994	ՀԱԸ 2017
Նոր Կտակարան			
Մատթեոս			
Մարկոս			
Դուկաս			
Հովհաննես			
Գործք Առաքելոց			
Հակոբոս	Հռոմեացիս		

Ա-Բ Պետրոս	Ա-Բ Կորնթացիս
Ա-Գ Հովհաննէս	Գաղատացիս
Հուդա	Եփեսացիս
Հռոմեացիս	Փիլիպեցիս
Ա-Բ Կորնթացիս	Կողոսացիս
Գաղատացիս	Ա-Բ Թեսաղոնիկեցիս
Եփեսացիս	Ա-Բ Տիմոթէոս
Փիլիպեցիս	Տիտոս
Կողոսացիս	Փիլիմոն
Ա-Բ Թեսաղոնիկեցիս	Եբրայեցիս
Եբրայեցիս	Հակոբոս
Ա-Բ Տիմոթէոս	Ա-Բ Պետրոս
Տիտոս	Ա-Գ Հովհաննէս
Փիլիմոն	Հուդա
Հայտնություն	